Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲԼԻ
12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ.
Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թուրքիա՝ 120 ղրուշ։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել հին հասցեն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակագրոշմով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. 1 երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով՝ Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սեպտեմբերի 11-ին վախճանվեց
ՄԻՔԱՅԷԼ ՄԱԴԱԹԵԱՆԸ,
որի մասին ցաւօք սրտի յայտնում են ազգականներին ու ծանօթներին հանգուցեալի որդիքը՝ Մարգարիտ Աբրեանցը, Մարիամ Շախեանցը, Հեղինէ և Տիգրան Մադաթեանցները։ Հոգեհանգիստը ամեն օր՝ երեկոյեան ժամը 7-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը երեքշաբթի, սեպտեմբերի 14-ին, առ. ժամը 10-ին Աբրեանցի բնակարանից (Գօլովինսկի, 19) դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խոջայիվանքի գերեզմանատունը։ 1—1

ԴԱՇՆԱԿԱՀԱՐ
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ
(4.) առ. Ելիզավէտինսկայա, № 40. 985. 20—9

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿ. „ՇՈՒԿԵՐՏ ԵՒ ԿՕՄ.“ ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
Պետերբուրգի «ՍԻՄԷՆՍ և ԳԱԼՍԿԷ» ռուսական էլէքտրո-տեխնիկական գործարանների ակց. ընկ., Բերլինի «ՍԻՄԷՆՍ և ԳԱԼՍԿԷ» ակց. ընկ., Բերլինի «ՍԻՄԷՆՍ ԶՈՒԿԵՐՏ-ՎԷՐԿԷ» ակց. ընկ., Կօլմէնի մեքենագործական ընկ. ու Եղբ. «ԿՐՕՍՍԼԷՅ» անգլիական գործարանի ներկայացուցիչներ։

ԷԼԵԿՏՐՕՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Դինամօ-մեքենաներ, էլէքտրաշարժիչներ ամեն տեսակ և ոյժի մշտական և փոփոխող էլէքտր. հոսանքի համար։ Էներգիայի յանձնումն որոշ հեռաւորութեան վրա։ Քաղաքներ և մասնաւոր ձեռնարկութիւններ լուսաւորելու համար կենտրոնական կայարանի սարքումներ։ Բանկաֆրմատորներ։ Օգամաքրիչներ ամեն տեսակ նրպատակի համար։ Օզոնի օգտագործիչներ։

ԷԼԵԿՏՐ. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Մշտական և փոփոխվելիք լուսաւոր. համար մէկ և բազմաթիվ հոսանք։ Երկաթուղային ապարանչներ։

ՀԵՌԱԳՐԻ ԵՒ ՀԵՌԱԽՕՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Ամենել հեռագիր։ Հեռագրական ապարատներ։ Ստես տասագ. ռախօսներ։ Գանգագոյժ ազդանշան գործիքներ։

ԼԱՄՊԱՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Ղեղնաձեւ լամպաներ՝ ուշագրաւ և սովորական։ Ցնտեական լամպաներ „ՑԱՆՏԱԼ“ և „ՄԻ-ՊՈՏՐՈՅԳԱՅԻՆ ԼԱՄՊԱՆԵՐ“։ Լամպաներ ածխային թելով։

ՊԵՀԵՍՏՈՒՄ կան՝ դինամօ-մեքենաներ, էլէքտրաշարժիչներ, հաղորդիչներ, զանազան տեսակ նիւթեղէններ էլէքտրական կառուցուածքների համար և այլն։
ՊՐԷՑԻ-ԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ ԵՒ ՆԱԽԱՀԱՇԻՒՆԵՐԸ ուղարկվում են ըստ առաջին պահանջման։
Տէլէֆօն № 533. Հասցէն հեռագիրների համար՝ Шукертъ, Тифлисъ.
(4.) առ. № 1. 433. 26—12

Adresse Télégraphique ANITAS
Адресъ Телеграммъ САНИТАСЪ Тифлисъ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.
ՊԻԿՍԱՓՕՆ
ԶԻՒԹԱՅԻՆ ՀԵՂՈՒԿ ՍԱՊՕՆ
ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ
Միակ անգոյն պրէպարատ ձիւթից (деготь), առանց սպէցիֆիկ հոտի։
առ. 1065. 1—1

Թիֆլիսի Ժողովարան
ԱՄԱՐԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԵԶ
ԻՐՈՒԱՔԱՆՉԻՒՐ ՇԱԲԱԹ
տեղի կունենայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՁՈՐՍ ԵՐԵԿՈՅԹ
Սեպտեմբերի օրերը՝ ԼԱՐԱՆՈՒԱԳ ԽՈՒՄԲ, ՍԱԶԱՆԴԱՐ, ՊԱՐԵՐ։
Հինգշաբթի և շաբաթ օրերը՝ ԼԱՐԱՆՈՒԱԳ ԽՈՒՄԲ։
Կիրակի օրերը՝ ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ և ՍԱԶԱՆԴԱՐ։
Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 1 ռուբ., կանայք 50 կ.։
ԱԶԴ.—Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ երեկ. ժամը 6—8-ը՝ երեխաների համար—ՊԱՐԵՐ։
(4.) առ. 729. 0—14

ԲԺԻՇԿ
ԱՐՏԱՇԷՍ ՇԽԵԱՆ
վերադառնալով արտասահմանից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը իր ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ, Գանձակայա փողոց № 15.
(ու. կ. չ.) (առ.) 1061. 5—2

ԵՐԴՈՒՆԵԱԼ-ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ
ՀԱՄԱՁԱՅՊ
ՀԱՄԲՈՐՁՈՒՄԸՆԸ
տեղափոխվեց
Ելիզավէտինսկայա փող. № 99.
(ա.օ.) (առ.) 1062. 2—2

Մի համայարանաւարտ, փորձառու
ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ
ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
բոլոր դպրոցների համար, թէ հայոց և թէ ռուսաց։
Գները չափաւոր են։
Դիմել՝ Абасъ-Абатскій пер. № 10, д. Тотоянца, верхн. этажъ.
(օ. ժ.) 1058. 5—2

ՈՒՍՈՒՑԻՉ
Գ. ՄԻՐԱՂԵԱՆԸ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
Николаевская ул. № 25, кв. 10.
(օ. ժ.) 1057. 3—2

Գայիանեան օր. դպրոցում
ՎԵՐԱԿԱՑՈՒՑՈՒՄ
տեղ է բացվել։ Ծնողներ ընդունվում են մինչև սեպտ. 16 ը։ Վարչութիւն
(4.չ.) առ. 1066. 2—1

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՀԱՇԻՒԸ

II

Փոխարքայի երկրորդ ամենահպատակ զեկուցագիր-հաշիւը, ներկայացված այս 1910 թ. Թագաւոր Կայսրին Կովկասեան երկրի հնգամեայ կառավարութեան մասին, առաջ բերելով որոշ փաստական տեղեկութիւններ, նկարագրում է երկրի ներկայ քաղաքական վիճակը և ցոյց է տալիս, որ նախկին սուր ցնցումները, ընդհարումները, յեղափոխական շարժումները արդէն անցել և անցնելու վրա են, որ առաջ է գալ և անցնելու վրա է, որ երկրի անդորրութիւն և երկրի արդիւնաբերական զարգացումը բաւական բարձրացել է։ «Ներկայումս, ասում է հաշիւը, երկրի ամբողջ տարածութեան վրա չը կայ յեղափոխական որևէ նշանաւոր կազմակերպութիւն նրանցից, որոնք հացրին երկիրը անիշխանական դրութեան»։

Հաշիւը չէ բացատրում, որ երկրի մէջ, ժամանակ առ ժամանակ, զանազան տեղերում պատահում են յանդուգն աւազակութեան և կողոպուտի առանձին արտայայտութիւններ, բայց այդ դէպքերն այժմ հազուագիւտ են, ուստի և հարկ չը կայ այլևս երկար պահպանել երկիրը զինուորական դրութեան մէջ և յոյս կայ, որ կարելի է շուտով բացառիկ դրութիւնները պահել միայն առանձին կէտերում, ուր հանգամանքները և տեղական պայմանները պահանջում են բացառիկ [illegible]։

Ուրախալի է կարդալ այդ յայտարարութիւնը Փոխարքայի զեկուցագրի մէջ։ Ոչ մի բան այնքան չէ վնասում երկրի կանոնաւոր կուլտուրական և խաղաղ զարգացման, որքան բացառիկ դրութիւնը, երբ ներգործում են ոչ թէ ընդհանուր ռովորական օրէնքներ, այլ բացառիկ օրէնքներ։

Միւս կողմից ուրախալի է կարդալ և այն, որ Փոխարքան իր հոգածութեան առարկայ է շինել գիւղական ազգաբնակութեան վիճակի և հողային շինարարութեան կազմակերպութիւնը և դրական խոստումներ են տրվում իրագործել մի շարք ըէֆօրմներ, յիշված առաջին զեկուցագրի մէջ։

Կովկասի ազգաբնակութիւնը, առանց ցեղի և կրօնի խտրութեան, կարող է վկայել, որ ներկայ Փոխարքան աշխատել է միշտ միհաւասար արդարութեամբ վերաբերվել ամենքին և այդ պատճառով էլ գրաւել է ազգաբնակութեան համակրութիւնը։

Եւ եթէ ներկայ Փոխարքայի օրով իրագործվեն այն ըէֆորմները, որոնք ծրագրված են նրա զեկուցագրերի մէջ, մանաւանդ եթէ գոնէ երկու նշանաւոր ծրագիրներ, որոնք վաղուց հերթական են, իրագործվեն, այն է զեմստվային կանոնադրութիւնը և գիւղական ազգաբնակութեան հողային շինարարութիւնը, ոչ մի կասկած չը կայ, որ կոմս Վորոնցով-Դաշկով եթէ իր դէմ յարուցանէ «սևերի» և «կիսասևերի» զայրոյթը, բայց անշնչելի յուշարձան կը կանգնեցնէ իր համար Կովկասի և Ռուսաստանի պատմութեան մէջ։

Ռուսաստանի կենսական շահերը պահանջում են, որ Կովկասեան «մարգարիտը» ամուր և անքակտելի կերպով զոդված լինի իր հետ, իսկ այդ հնարաւոր է միայն երկրի կուլտուրական և խաղաղ զարգացման գործի կանոնաւոր առաջադիմութեամբ։ Այդ առաջադիմութիւնը կախված է այն միջոցներից, որոնք ծրագրված են Փոխարքայի զեկուցագրի մէջ։

Հ. Առաքելեան

ՏՈՒԷՔ ԱՆՄԻԶԱՊԷՍ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Տեղական լրագիրները հաղորդում են, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան որոշմամբ 73 աշակերտներ արձակված են դպրոցից։

73 աշակերտներ նետված են փողոց։ Եթէ միայն ճիշդ է այս անսակնկալ լուրը,—անակնկալ, որովհետև այդպիսի վոթորկալից դէպքի ոչ մի նախանշան չը կար մինչև այսօր,—շատ օտարոտի և տխուր խորհրդածութիւնների առիթ պէտք է տայ հայ հասարակութեան, քանի որ հոգաբարձութեան կողմից որևէ պաշտօնական բացատրութիւն կամ պատճառաբանութիւն այդպիսի մի ծանր և պատասխանատու քայլի մասին մինչև այժմ չը հրատարակվեց։

Մենք առ այժմ չենք մտնում բացատրութիւնների և գնահատումների մէջ, քանի որ գործի փաստական կողմը դեռ անյայտ է, և չենք կամենում հապճեպ եզրակացութիւններ անել։ Բայց չենք կարող չարտայայտել մեր խորին զարմանքը և միևնոյն ժամանակ զայրոյթը ներկայ հոգաբարձութեան այն վարմունքի մասին, որ դիմելով այդպիսի մի արտակարգ և բացառիկ միջոցի, որպիսին է 73 աշակերտների արձակումը, չէ կամեցել մի բոպէ մտածել, թէ այդպիսի մի բացառիկ և արտակարգ որոշումն կարող է ահագին ցնցումն առաջ բերել հայ հասարակութեան մէջ, ուստի հարկ էր այդ որոշման հետ միասին ներկայացնել և համապատասխան բացատրութիւն, թէ ինչից, ինչ արդարացի հանգամանքներից ստիպված նա դիմել է այդպիսի մի արտակարգ միջոցի։

Երկուսից մէկը. կամ արդարացի և իրաւացի է հոգաբարձութեան որոշումը և նա ունէր հիմնաւոր պատճառներ՝ այդպիսի խիստ միջոցի դիմելու, կամ Ներսիսեան դպրոցում տիրում են այնպիսի կարգեր, որոնք հնարաւոր են դարձնում 73 աշակերտ միաժամանակ և միատեղ արձակելու դէպքը։

Երկու պարագաներում ևս հոգաբարձութիւնը պարտական է [illegible] համար տալ հասարակութեան և համոզել նրան, թէ խաղալով 73 մատաղ էակների ապագայ կեանքի և բաղդի հետ՝ նա ունեցել է խիստ իրաւացի պատճառներ։

Մենք և մեզ հետ հայ հասարակութիւնը սպասում ենք այդ բացատրութեան, որից յետոյ մենք կարող ենք միայն մեր վերջին խօսքը ասել հոգաբարձութեան վարմունքի մասին։

Հ. Ա.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հելսինգֆորս, 10 սեպտեմբերի

Տարման Սվինխվուդը, պարզելով սէյմի գումարման պատճառները, յայտնեց նիստում, որ յունիսի 17-ի օրէնքը՝ պետութեան և Ֆինլանդիայի համար ընդհանուր օրէնքներ հրատարակելու կարգի մասին՝ անպարտադիր է Ֆինն քաղաքացիների, պաշտօնական անձանց և սէյմի համար և չէ կարող օրինական ոյժ ունենալ սէյմում. մինիստրների խորհուրդը իշխանութիւն չունի օրինագծեր ներկայացնել սէյմին. այդ պատճառով դումանը հնարաւոր չէ գտնում օրինագծերը առաջադրել սէյմի քննութեան։ (Հ. Գ.)

Ռստով Դ./վ., 10 սեպտեմբերի

Պօրշինսկայա կայարանի մօտերը ընդհարվեցին ապրանքատար և զինուորական գնացքները։ Վերջինից Չարդվեցին չորս վագօն, կան բազմաթիւ սպանվածներ և վիրաւորվածներ։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 10 սեպտեմբերի

Կաթնատու կենդանիներ համառուսական առաջին ցուցահանդէսին բաժանվեցին 7 բարձր տեսակի և պատուաւոր դիպլոմներ, 37 ոսկէ մէդալներ, 44 արծաթէ մեծ, 57 փոքր, 70 բրոնզէ մէդալներ, 40 գովասանական թղթեր։ (Հ. Գ.)

Խարկով, 10 սեպտեմբերի

Քաղաքապետ ընտրվեց պրոֆ. Պոգորելկին։ (Հ. Գ.)

Սոֆիա, 10 սեպտեմբերի

Կառավարութիւնը վճռեց վերստին բանալ Դանուբի նաւանգիստները Օդեսայից ստացվող ռուսական ապրանքների համար, պայմանով որ նաւերը եօթն օր ենթարկվեն կարանտինի։ (Հ. Գ.)

Վիէննա, 10 սեպտեմբերի

Ֆրանց-Յովսէփը գերմանական կայսրի այցելութեան առիթով գերմանական դեսպանին շնորհեց իր ծնընդեան 80-ամեակի յօբելեանական շքանշանը։ (Հ. Գ.)

Հռոմ, 10 սեպտեմբերի

Հռոմը խաղաղական զօրքերով գրաւելու տարեդարձի օրը քաղաքապետի արտասանած ճառի առիթով պապը կարդինալին ուղղած նամակում բողոք յայտնեց, որ Հռոմի պաշտօնական իշխանութիւնները օրէ-ցօր վիրաւորանքներ են հասցնում կաթոլիկներին։ (Հ. Գ.)

Սէրաէվօ, 10 սեպտեմբերի

Կէս գիշերին բօսնիական բոլոր երկաթուղագծերի վրա սկսվեց պասիվ գործադուլ, որ պատճառաբանվում է ծառայողների պահանջներին բաւարարութիւն չը տալով։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ԹՈՒՐՔԻԱ

Թէհրան, 10 սեպտեմբերի

Մէջլիսը պետական խնամակալ ընտրեց Նասր-ուլ-Միւլքին, որ ներկայումս գտնվում է Եւրոպայում։ (Հ. Գ.)

Ուրմիա, 10 սեպտեմբերի

Գործակալութեան թղթակցի հետ տեսակցելիս՝ նահանգապետը յայտնեց, որ թիւրքերի վերաբերութեամբ նա մտադիր է բարեկամ մնալ մինչև այն ժամանակ, քանի թիւրքերը իրանց վարմունքով չեն հարկադրի նրան գործել այլ կերպ. ներքին քաղաքականութեան մէջ նա վճռել է վերականգնել հաստատութիւնները, առանձնապէս քաղաքային վարչութիւնը։ (Հ. Գ.)

Լօնդոն, 10 սեպտեմբերի

Բէյրութի գործակալութիւնը հաղորդում է. «Արտաքին գործերի մինիստրութիւնը յայտնում է, որ Պարիզում՝ թիւրքիայի համար փոխառութեան մասին կատարվող բանակցութիւնների վերաբերութեամբ բանկիր Կուսսէլը ոչ մի քայլ չի անի առանց արտաքին գործերի մինիստրութեան գիտութեան»։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱԳԱՂԹ

Նոր-Բայազէտ, 6 սեպտեմբերի

Ցաւախ սենք առիթ ենք ունեցել խօսելու մեր պանդուխտների մասին, որոնք տարիներով բացակայում են իրանց հայրենիքից և իրանց կեանքի մեծ մասը անցնում օտարութեան մէջ։ Այս տարի զանազան հանգամանքների բերմունքով մեր օտարականները մեծ բազմութեամբ վերադարձել են իրանց ծննդավայրը։ Դրանց կարելի է բաժանել երկու դասակարգի՝ ինտելիգենտ և ոչ-ինտելիգենտ։ Առաջին դասակարգին պատկանող անդամները, որոնք են ուսուցիչներ, ուսանողներ, աշակերտներ և այլն, գալիս են մեր քաղաքը յատկապէս ամառը կազդուրվելու։ Իսկ միւս դասակարգի մարդիկ, որոնք գլխաւորապէս պատկանում են արհեստաւոր, բանւոր և կղզիակի պարապմունք ունեցողներին, գալիս են հայրենիք առաւելապէս իրանց ամառվայ աշխատանքը առաջ տանելու, ընտանիքի ցաւն իմանալու, նրա կարիքը հոգալու և տարվայ պաշարը պատրաստելու համար։

Մի կողմ թողած առաջին դասակարգը, այն է ինտելիգենտ օտարականներին, որոնք իր ժամանակին յետ են դառնում իրանց պաշտօնատեղին, միւս աշխատաւոր դասը՝ քիչ բացառութեամբ՝ մտնելով իր տնային աշխատութեան մէջ, զգալի փոփոխութիւն է կրում թէ ֆիզիկապէս և թէ նիւթապէս։ Օրինակ՝ տեսնում էք մէկը գալիս է Թիֆլիսից կամ Բագուից մաքուր հագված, նոյնիսկ եւրոպական տարազով, որից գրեթէ թարմութիւն է բերում. գրպանը նոյնպէս հարուստ է, փողով լիքը։ Նա մի կողմ թողնելով մեծ քաղաքների կեանքի և ապրուստի ձևը՝ ժամանակաւո-

բապէս մտնում է իր դերի մէջ, ձեռնարկելով տեղական հողագործական աշխատանքին։ Դա անշուշտ գովելի եռանդ է։ Եւ նրանք, մեր օտարականները, ուրախ սրտով ձեռք առնելով իրանց սեփական աշխատանքը, սրում-սարքում են իրանց հողագործական գործիքները—գերանդին ու փոցխը—և իրանց ուշադրութիւնը առաջ տանում։ Բայց, դժբաղդաբար, այս տարվայ հողագործական անարգասաւորութիւնը միանգամայն վհատեցրեց մեր օտարականներին, որոնք մեծ յոյս էին կապել իրանց սեփական աշխատանքի վրա, քան թէ մեծ քաղաքներից ստացված օրավարձի։ Սակայն մեր պանդուխտները, թափելով իրանց ֆիզիկական ամբողջ աշխատանքը ուշադրութեան վրա, վանելով բերած գումարը և զգալով փողի պակասութիւն և կողմնակի աշխատանքի և վաստակի բացակայութիւն, դարձեալ վերյիշեցին իրանց պանդխտութեան վայրերը և կամաց-կամաց իրար ետևից սկսեցին չուել դէպի իրանց նախկին գործունէութեան կենտրոնները, քանի որ տեղական աշխատութիւնը ոչ մի ապրուստի աղբիւր չէ կարողանում ներկայացնել նրանց՝ իրանց օրապահիկը հայթայթելու գործում։

Արդէն սկսվել է արտագաղթը, և մեր երկրի օտարականները անդադար գնում են խմբերով դէպի վաճառաշահ մեծ քաղաքները, որտեղից միայն մի քանի ամիս առաջ վերադարձել էին իրանց ընտանիքի և հարազատների շրջանը։ Այդպիսով, ուրեմն, շուտով այդ արտագաղթը դատարկելու է մեր գաւառը և քաղաքը իրանց պանդուխտ անդամներից, որոնք գաղթելով «օտար երկիր»՝ դարձեալ մոռանալու են իրանց ընտանիքներին տարիներով և էլ աւելի երկար ժամանակ, մինչև որ նորից կարիք կը զգան կամ կը ստաբերեն իրանց սիրելիներին կամ իրանց հայրենի երկիրը և նորից ոտք կը կոխեն իրանց ծննդավայրը...

Ուրեմն դարձեալ արտագաղթ... Օ՜հ, այդ արտագաղթը որքան թանգ է նստում մեր բոլոր պանդխտողների վրա և որպիսի չարիքներ է առաջացնում նրանց ֆիզիկական և բարոյական կեանքում... Սակայն դա մի ցաւ է ընդհանրապէս, որը խրօնիկական բնաւորութիւն է ստացել մեզ համար, որը կարօտ է բուժիչ, զօրեղ միջոցների, և մեր պանդուխտ-օտարականները միանգամայն կարօտ են այդ բուժիչ միջոցներին, որոնք կարողանային մասամբ կանգնեցնել իրանց արտագաղթը։ Բայց որոնք են այդ բուժիչ, այդ զօրեղ միջոցները,—ահա գլխաւոր հարցը...

Դ. Սինանեան

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

Անրան կենդանիների խնամատարութեան ընկերութիւնը ունի որոշ կանոնադրութիւն, իսկ ուսուցչութիւնը՝ ոչ։

Կոչ եմ անում ամբողջ ուսուցչութեան։

Պահանջեցէք ձեր արդարացի իրաւունքը։ Թող իրաւասու մարմինը որոշ հիմքերի վրա դնի ձեր ապագան։

Բաւական է ինչ որ կրեցիք ձեր կաշու վրա, բաւական է ինքնախաբէութեամբ ապրել, ապագայ յոյսերով կերակրվել։ Այսքան տարիների փորձը մի՞թէ ձեզ դաս չեղաւ։ Մի՞թէ ձեր ականջները չը ձանձրացան «պիտի ապահովել ուսուցչի դրութիւնը, հարկաւոր է որոշ կանոնադրութիւն» խօսքերը շարունակ լսելով։

Հասարակութեան բանիմաց մասը շարունակ գրեց և բողոքեց լրագրութեան մէջ, ձայն բարձրացրեց մամուլը, բայց այդ բոլորը, բոլորը մնացին «ձայն բարբառոյ յանապատի», և իրաւասու մարմինը չը շարժվեց իր տեղից և իր veto-ն չը դրեց ուսուցչի վերաբերմամբ անարդարացի վերաբերմունքի դէմ, մնաց կրկին նոյնը և նոյնը։

Երբ այդ ամենը պիտի մնայ իբրև ցիտատներ միմիայն թղթի վրա գրած, միանգամայն աւելորդ է։

Երբ այդ բոլորը պիտի մատնվի անուշադրութեան, այս ինչ գոռում գոչում է։

Երբ չը պիտի իրագործվի, չը պիտի լուծումն ստանայ յարուցված հարցը, ապա էլ ում և ինչու համար է մատուցը շարունակ գրում։

Կոչ եմ անում բոլոր ուսուցիչներին, խմբագիրներին և գիտակից հասարակութեանը՝ իրանց արդարացի պահանջներով, ազնիւ զէնքով վճռականապէս հրապարակ գալ, պահանջել որոշ կանոնադրութիւն և վերջնականապէս վերջ տալ ուսուցչութեան այսօրինակ քաօս դրութեանը։

Զայնակցեցէք, պաշտպանեցէք, պարոններ, ապագայ սերունդ կրթող գասակարգի՝ ուսուցչութեան ոտնահար եղած իրաւունքները, այդ անապահով, հալածված և զրկված ուսուցչին, որը լուսատու լապտերը ձեռքին, ոտաբոբիկ, ձեր բոլորի մանուկ որդիների ձեռքից բռնած իբրև Մենտոր տատասկների միջով առաջ է քայլում։

Ուսուցիչ

Երևան

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՅԵՏԱՄՆԱՑՈՒԹԻՒՆԸ

Ահա սեպտեմբեր ամիսն է, և մեր գիւղացին դեռ չէ աւարտել իր դաշտային աշխատանքները։

Դաշտային աշխատանքները ուշ աւարտելով հայ գեղջուկը շատ մնասներ է կրում։

Մինչև նոր բերքի դուրս գալը, ապրանքի (ցորենի, գարու) գինը արդէն զգալի կերպով թանգանում է, թանգանում է նոյնպէս քրէնը և աղը, քանի որ գիւղացին զրաված է։

Այս բանից շատ խելացի կերպով օգտվում են մեր հարևան աչքաբաց օտարականները. նրանք յուլիսին վերջացնում են դաշտային աշխատանքները. աւելացած հացը [illegible], քան հայրը. սկսում են թանգ գնով քրէներ տանել և աղ բերել Կաղզուանից աւելի թանգ ծախել։

Մինչդեռ հայը աշխատում է։

Կարծես բնութիւնն էլ սկսում է մի կողմից պատժել հային. վրա են հասնում աշնանային յորդ անձրևները, որոնց տուած մնասներին մենք ներկայումս հանդիսատես ենք։ Անձրևներից հացը դեղնում, փչանում և մի խօսքով, կորցնում է իր արժէքը։

Բայց այդ բոլորը չը պիտի սովորեցնել աշակերտին իբր գերբնական պատուէրներ և արգելվածներ, որոնց կուրօրէն ենթարկվելը մարդուս պարտականութիւնն է. այլ հարկաւոր է պատժական յարմար օրինակներով և ազատ կերպով վիճաբանելով աշակերտների հետ և բացատրելով բարոյական գաղափարների բնական հիմքերը՝ պատրաստել նրանց մէջ հոգեկան տրամադրութիւն, քննադատական հասկացողութիւն և ինքնուրոյն դատողութիւն՝ այդ սկզբունքների բնական անհրաժեշտութիւնը ընդհանրութեան և հետևաբար էլ անհատի երջանկութեան համար գիտակցելու, և եռանդ ու հաստատուն բնաւորութիւն՝ ապրելու և գործելու այն եղանակով, որի բարի և ազնիւ լինելը նրանք ճանաչել են։

Բարոյականութեան դաստիարակութիւնը բնաւորութեան զարգացման անշուշտ մեծագոյն կը նպաստի։ Բայց մենակ նրանով անկարելի է հասնել ցանկացած նպատակին։ Հարկաւոր է ամբողջ դպրոցական դաստիարակութիւնը նոր հիմքերի վրա դնել։ Աշակերտների յարաբերութիւնը դէպի ուսուցիչները, հիմնվին փոփոխութեան կարօտ է։ Դպրոցական տիրող կարգապահութիւնը՝ ճնշելով աշակերտի ինքնուրոյնութիւնը և պահանջելով նրանից անպայման հնազանդութիւն՝ կարող է միայն ատելութիւն և զզուանք դէպի դպրոցը առաջացնել և ոչ բնաւորութիւններ կրթել։ Այդ գիտակցելով՝ Անգլիայում և Ամերիկայում մի շարք մանկավարժներ մտածել են դպրոցական կարգապահութեան մի մասը դնել աշակերտների իրանց ձեռքը՝ այդպիսով պատասխանատուութեան ոգին նրանց մէջ ուժեղացնելու և պատժի վախը փոխարինելու պատուաճանչութեամբ։ Ամերիկացի մանկավարժ L. Gill-ը 1897 թուին այդ նորութիւնը, անուանելով «School city system», մտցրեց Նիւ Եորկի մի դպրոցում, որին հետևեցին և ուրիշ դրական հաստատութիւններ Մրացեալ Նահանգներում, Շվեյցարիայում, Աւստրիայում և Պրուսիայում, ամենուրեք էլ մեծ աջողութեամբ։ Աշակերտներին տրվում է սահմանադրութիւն, որի հիման վրա նրանք ընտրում են իրանց մէջից դպրոցական համայնքի համար մի նախագահ, մի քարտուղար, մի համայնական խորհուրդ և մի դատաստանական մարմին։ Նշանակվում են մասնաժողովներ կարգապահութեան, գրադարանի, առողջապահութեան և այլ դպրոցական գործերի համար։ Խորհուրդներին ներկայ է լինում մի ուսուցիչ, և կարևոր գործերի համար հարկաւոր է դպրոցի տեսչի ստորագրութիւնը։

Այդպիսի աշակերտական ինքնավարութիւնը՝ փորձված և հոգեբան մանկավարժների հսկողութեան ներքոյ՝ ամենալաւ եղանակն է լրացնելու բարոյականութեան դաստիարակութիւնը և պատրաստելու կեանքի համար նախապատրաստված և ինքնուրոյն անձինք*)։

Ներկայ քաղաքակրթութեան անհրաժեշտ կացութիւնը և ներքին հակասութիւնը մեծ վտանգ է պարունակում մարդկային առաջադիմութեան համար։ Իսկական կուլտուրայի մասշտաբը՝ աւելի քան գիտութեան և տեխնիկայի զարգացումն՝ բարոյական յատկութիւնների ուժեղանալն է։ Առանց դրան շուտ թէ ուշ անկումն անխուսափելի կը լինի։ Տիրող մտքերի և հասարակական կարգերը շատ անպատշաճ են մարդուս աղնուացման։ Շատերը կարծում են, թէ՝ փոխելով այդ կարգերը՝ վատութեան և կեղծութեան պատճառները կը վերանան և մարդիկ կը լինեն բարի և ազնիւ։ Բայց ինչպէս փոխել, քանի որ ամեն բանակներում դեռ տիրում են անասնական կրքերը՝ աննեղողամտութիւնը, անսահման եսական շահասիրութիւնը։ Հարկաւոր է առաջ փակել բարոյական չարիքների աղբիւրները, և յետոյ սոցիալական հարցերը ըստ ինքեան կը լուծվեն։ Ազնիւ մարդիկ կունենան ազնիւ կարգեր, իսկ ազնիւ մարդիկ կարելի է միայն առաջացնել նպատակայարմար դաստիարակութեան միջոցով։

Ներկայումս աւելի քան երբէք մարդկութեան և քաղաքակրթութեան ապագան կախված է մանկավարժի հասկացողութիւնից և բարի կամքից։ Երբ հիւսիսային Բեռեռը գտնելուց և օդը օդապարիկների և աէրոպլանների միջոցով մարդկութեան հպատակեցնելուց յետոյ յայտնի բնագէտ Օսվալդից հարցրին, թէ ինչ կարևոր հարց է մնում այժմ լուծելու, նա տուեց միակ ճիշդ պատասխանը ասելով. «Մանկութեան դաստիարակութիւնը»։ Փոխարէն ձիրվ՝ մենք այժմ ճանապարհորդում ենք երկաթուղով և գուցէ մի ժամանակ կը ճանապարհորդենք օդապարիկով։ Բայց կը լինե՞նք դրանով աւելի գոհ, քան եղել ենք և ենք։ Երբէք։ Երջանկութիւնը արտաքին բաներում չէ, այլ մեր մէջումն է. երջանիկ և գոհ կը լինենք միայն, երբ այլևս նախանձը և ագահութիւնը չեն վրդովի մեր ներքին խաղաղութիւնը, ատելութիւնը չի կուրացնի մեր աչքերը և չարութիւնը չի աղաւաղի մեր ոգու ներդաշնակութիւնը. մի խօսքով՝ երբ մենք կը սովորենք տէր դառնալ մեր կրքերին՝ թոյլը տալու, որ քայքայեն մեզ հոգեպէս և մարմնապէս։ Մի ժամանակ կրօնը յարմար միջոց էր այդ նպատակին հասնելու։ Նոր ժամանակը պահանջում է նոր միջոցներ։ Էտիկական շարժումը դեռ իր գործունէութեան սկզբումն է, նա ստիպված է դեռ մեծ խոչընդոտների դէմ մարտնչել, բայց ճշմարտութիւնը և բանականութիւնը զինակից ունենալով՝ անկասկած մի օր յաղթող կը հանդիսանայ՝ յերջանկութիւն մարդկութեան։

Բերլին Դր. Զէմս Գրենֆիլդ

*) Տես «Մշակ» № 200։

*) Ով ցանկանում է տեղեկանալ այս հարցով զբաղվող ուրիշ հեղինակների բարոյականութեան դաստիարակմամբ առաջարկած ծրագիրները և առ հասարակ մօտից ծանօթանալ էտիկական շարժումին, նա հարկաւոր նիւթ կը գտնի հետևեալ գրքերում. Prof. D-r F. Adler: «Der Moralunterricht der Kinder», Berlin, 1894. Prof. A. Döring: «Handbuch der menschlich-natürlichen Sittenlehr», Stuttg., 1899; «Der ethische Unterricht», Berlin, 1893. D-r F. W. Foerster: «Jugendlehre», Berlin, 1906; «Lebenskunde», Berlin, 1906. Prof. F. Jodl: «Moral, Religion und Schule», Stuttg., 1892. D-r R. Penzig: «Ernste Antworten auf Kinderpragen», Berlin, 1907; «Die ersten moralunter weisungen des Kindes», Bern, 1896; «Zum Kulturkampf um die Schule», Berlin, 1905; «Ohne Kirche», Jena. J. H. Müller: «Moralunterricht», Berlin, 1905. Fr. Wyss: «Handluch der humanen Ethik», Bern, 1899. D-r J. Unold: «Aupgaben und Ziele des Menschenlebens», Leipzig, 1904. Jules Payat: «Cours de morale», Paris; «L'éducation de la volonté», Paris, 1904. F. J. Gauld: «Childrens Books of Moral Lessons. Papers on Moral Education, pirst international moral Education Congress», London, 1908. «International Inquiry into Moral Instruction and Training in Schools», London, 1908.

ՌԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ*)

D-r Unolds-ը իր «Aupgaben und Ziele des Menschenlebens» գրքում բարոյականութեան դաստուրութեան ծրագրի նկատմամբ հետևեալ սիստեմն է առաջարկում։

Նախ և առաջ պիտի աշակերտի հետ հաստատաբար անցնել կուլտուրական պատմութիւնը իր չորս ատիճաններով (որսորդական և ձկնորսական, հովական, գիւղատնտեսական և ինդուստրիական), որից կարելի է եզրակացնել մարդկութեան առաջադիմութեան և նպատակի դաղափարը։ Յետոյ անցնելով ոչ-մարդկային կենդանիների բնագիտական ուսումնասիրութեան՝ ցոյց տալ բնութեան երկու մեծ օրէնքները, որոնք են՝ պահպանել սէրը անհատների պահպանման, յարմարվելու և բազմանալու միջոցով և հասնել ճոխ բազմատեսակութեան և ամենամեծ զարգացման կենսամարդու, բնական ընտրողութեան և ժառանգութեան միջոցով։ Անցնելով դա՝ կարելի է այս հիմնական օրէնքների նշանակութիւնը մարդկային անհատի և հասարակութեան կեանքի համար աշակերտին հասկանալի դարձնել։ Այդպիսով զարթեցնելով աշակերտների մէջ հետաքրքրութիւն և հասկացողութիւն երկրային գոյութեան նպատակի և. անհատական ու հասարակական առողջ կեանքի համար՝ անհրաժեշտ բարոյական օրէնքների համար նա պատրաստ և հասունացած կը լինի գործնական-բարոյական կրթութեան, որ կը կայանայ հետևեալ առարկաներում։

1) Մանաւոր առողջապահութիւն՝ անհատին առողջ, ուժեղ, ճարպիկ, չափաւոր և դիմացկուն դարձնելու։

2) Մանաւոր տնտեսագիտութիւն՝ անհատին գործունեայ և հարստութիւն ձեռք բերելու ու գործածելու մէջ չափաւոր և խոհեմ դարձնելու։

3) Ազգային առողջապահութիւն՝ բացատրելով ժողովրդական առողջ և կարող կեանքի պայմանները, օրինակ՝ ընտանեկան հաշտ կեանք, զոհունակութիւն, միաբանութիւն, դիմադրական ոյժ և այլն։

4) Ազգային տնտեսագիտութիւն՝ զբաղվելով ընդհանրութեան բարօրութեան տեսակէտից ճիշդ և արդարացի ձևերով գոյքը ձեռք բերելու և բաժանելու հարցում։

5) Վայելուչ պարքի դաստիարակութիւն՝ սովորեցնելու անհատին վայելուչ և պատեւաւոր վարմունք և փոխադարձ յարգանք և հոգատարութիւն։

6) Բարոյագիտութիւն (նեղ իմաստով), որի նպատակն է զարդացնել անհատի մէջ իր անձը յարգելու, զսպելու և կատարելագործելու ձգտումը, բարեխղճութիւնը, ճշմարտութիւնը, արդարասիրութիւնը, բարեացակամութիւնը և մարդավայելութիւնը և դրանով ստեղծել ազատ և ազնիւ անձնաւորութիւններ։

7) Ազգային օրէնսդիտութիւն՝ որ ոչ միայն պիտի ուսուցանի տիրող օրէնքները, այլ և զարգացնի իրաւունքի ըմբռնումը և պարտաճանաչութիւնը։

8) Ազգային պետութեան իրաւագիտութիւն՝ ցոյց տալով կուլտուրական պետութեան պարտականութիւնը դէպի քաղաքացիները և վերջինների պարտականութիւնը դէպի պետութիւնը՝ համերաշխ կերպով ստեղծելու բարոյական և արդար հաստատութիւններ։

9) Մարդասիրութիւն՝ ազնուացնելու ընդհանուր մարդկութիւնը, որպէսզի բոլոր ազգերի ազատ և գիտակից աշխատակցութեամբ ստեղծվեն բարոյական կարգեր ամբողջ երկրագնդի վրա և մարդկութեան բոլոր անհատները դառնան իսկական մարդիկ՝ այսինքն լաւ գիտակցող և ցանկացող և ազատ անձնաւորութիւններ բարեկարգ հասայնքներում*)։

*) Տես «Մշակ» № 200

*) Տես «Մշակ» № 196-ում տպված Սալ-Մանի «Փէլիէտոնի» այն պարբերութիւնը, որ վերաբերում է Ս. Բալաղեանի էջմիածնի՝ ճեմարանի տեսուչ հրաւիրվելու հարցին, զանազան մեկնութիւնների ատիթ տուած լինելով, մեզ վրա պարտք դրեց ստուգել եղելութիւնը։ Այդ ստուգումը ցոյց տուեց, որ Սալ-Մանի յօդուածի մէջ անճշդութիւններ կան և նա անհամապատասխան է իրականութեան։ Ուստի և օրէնք թիւրիմացութեան տեղիք չը տալու համար, խմբագրութիւնս պարտք է համարում հաղորդել գործի փաստական դրութիւնը։

Ս. Բալաղեանի կողմից որևէ քայլ չէ եղել և ցանկութիւն կամ առաջարկ՝ ճեմարանի տեսչական պաշտօնը ստանձնելու համար, այլ նա ինքն է ստացել Բագրատվարդապետի միջոցով Ամենայն Հայոց Կաթողիկոսից առաջարկ՝ ստանձնել այդ պաշտօնը, ստանալով 4000 ր. ռոճկի տարեկան, բնակարան և այլն։ Ս. Բալաղեան սկզբում տրամագրութիւն է ցոյց տալիս ընդունել այդ առաջարկը, բայց յետոյ մտածելով էջմիածնի գործերի դրութեան մասին և երկիւղ կրելով այն պատասխանատուութիւնից, որ նա պէտք է ստանձնէ, հրաժարվում է իրան առաջարկված պաշտօնից, չը նայելով որ իրան յատկացվում էր մօտ 5000 ր. ռոճկի, եթէ հաշուենք բնակարանը և այլն։

Հետևաբար սխալ է այն, թէ Ս. Բալաղեան ինքը բարձրացրել է իր գինը, քանի որ ռոճկի քանակութիւնն իր կողմից չէ առաջանում և նա ռոճկի համար [illegible] ժարվել։

ԲԺՇԿԱՊԵՏ ՀԱԽՎԷՐԴԵԱՆԻ ԴՈՐԾԸ*)

Իսկոյն և եթ Շեխանցի մահից յետոյ բժշկապետ Հախվէրդեանը սկսեց ծախել հանգուցեալի իր ձեռքով պահեստի դրած գոյքը, այնպէս որ գոյքի մի մասը նա ծախել էր Մօսկվայում և Պետերբուրգում 1908 թուի նոյեմբերին։ Ի միջի այլոց նոյեմբերի 26-ին Հախվէրդեան ոսկէ իրեղէնների խանութի տիրոջ՝ Բօրիս Լատուգինի վրա ծախեց մի քանի թանգագին իրեր 1,700 ռուբլով, երկու օրից յետոյ Պետերբուրգի արքունական լոմբարդում դրաւ դրեց մի քանի իրեր 3,300 ռուբլով, իսկ նոյեմբերի 30-ին Մօսկվայում ծախեց մազեղէնի խանութի տէր Մէյէր Մուշտակովի վրա 1,300 ռուբլով։ Պետերբուրգի ընկերութեան տոմսակը շարժական իրերի դրաւականի համար, որով դրաւ էին դրված մազեղէնները։ Երկու մատանի փիրուզով բժշկապետ Հախվէրդեան ընծայել էր իր մօրը, իսկ մի ջուխտ ադամանդէ օղեր—Եղիսաբէթ Կուտլոեվին։ 1908 թուի դեկտեմբերի 4-ին, երբ Հախվէրդեան վերադառնում էր Պետերբուրգ և Մօսկվա իր արած ճանապարհորդութիւնից, նա բռնվեց Թիֆլիսի կայարանում և խուզարկութեան ժամանակ նրա մօտ գտնվեցին մի քանի իրեր Շեխանցի գոյքից, իսկ հետևեալ օրը նրա բնակարանը խուզարկելու ժամանակ այնտեղ գտնվեցին հանգուցեալին պատկանող էլի թանգագին իրեր։

Դատի կանչվելով որպէս մեղադրեալ՝ բժշկապետ Հախվէրդեան իրան մեղաւոր չը համարեց Շեխանցի իրերը սեփականացնելու համար և բացատրեց, որ ճանաչում էր ինքն հանգուցեալին դեռ գիմնազիստ ժամանակից, իսկ 1907 թուից, երբ իր եղբայրը պսակվեց հանգուցեալի քրոջ հետ, նա մի յայտնի չափով ազգականական կապով կապվեց նրա հետ։ 20 տարի տեղ ծանօթութեան ընթացքում նա և հանգուցեալը ամենալաւ յարաբերութիւնների մէջ էին, իսկ 1905 թուին, երբ նրանք Պետերբուրգում էին գտնվում՝ միմնոյն հիւրանոցում, նրանց մէջ սիրային կապ հաստատվեց, բայց այն ժամանակն և եթ այդ կապը կտրվեց, որովհետև Շեխանցը չը ցանկացաւ իր յարաբերութիւնները խզել Ա.-ի հետ։ Սակայն բարեկամական կապերը չէին ընդհատվում նրա հետ, և Շեխանցի խնդիրքով նա անընդհատ գտնվում էր նրա մօտ, խնամելով նրան որպէս հիւանդի, մանաւանդ որ նրա առողջական դրութիւնն ևս գնալով վատանում էր։ միևնոյն ժամանակ, Ա.-ի հետ իր յարաբերութիւնները կտրելուց յետոյ, Շեխանցը շատ վատ դրութեան մէջ ընկաւ և բժշկապետ Հախվէրդեանը ստիպված էր հանգուցեալի բոլոր ծախսերն անել։ Ցանկանալով վարձատրել նրան նրա անձնուէր հոգատարութեան և նիւթական զոհաբերութիւնների համար, Շեխանցը ընծայեց նրան իր արծաթեղէնը, թանգագին բարերը և մազեղէնը, իսկ ինքը համառեա հո տանտ տատեւում, ռանեա ռոեց այդ գոյքը, իսկ երբ Շեխանցը վախճանվեց, փողի սաստիկ կարիք ունենալով ծախեց իրան ընծայված գոյքի մի մասը։

Մեղադրվողին պաշտպանում էր երդուեալ հաւատարմատար Կլանկ։

Այդ գործը քննվում էր Թիֆլիսի նահանգական դատարանում սեպտեմբերի 9-ին։

Մեղադրական ակտը կարդալուց յետոյ սկսվեց վկաների հարց ու փորձը։

Ամենից առաջ հարց ու փորձի ենթարկվեց հանգուցեալ Շեխանցի աղախինը, Աննա Ֆօմինան, որը յայտնեց, որ այն բոլորը, ինչ-որ նա ասել է քննիչի մօտ որպէս մեղադրանք Հախվէրդեանի, սուտ է։ այդպէս նրան սովորեցրեց Մակարովը, իսկ այժմ, երդում ուտելուց յետոյ, նա ուղիղն է ասում։ դատարանում նա հաստատում է, որ Շեխանցը փողի կարիք ունէր վերջերս և նրա բոլոր ծախսերն անում էր մեղադրվողը։

Մեղադրվողի համար նպաստաւոր ցուցմունքներ տուին բժշկապետ Ս. Շահպարոնեան, որը խնամում էր հիւանդին, նպաստաւոր ցուցմունքներ տուին և այլ վկաները։

Վկաների ցուցմունքները ընդհանրապէս նպաստաւոր էին մեղադրվողի համար, որը շատ եռանդով էր պաշտպանվում։

Դատարանի նիստի երկրորդ օրը, սեպտեմբերի 10-ին, ցերեկվայ տասն և մէկերորդ ժամի սկզբին, մեղադրութեան ներկայացուցիչը մի մեղադրական ճառ կարդաց, որի մէջ ասաց, որ դատաստանական քննութիւնը շատ քիչ բան փոխեց մեղադրվողի մեղադրութեան պատկերի մէջ, որ հանգուցեալ Շեխանցի աղախինը—Աննա Ֆօմինան, ակներև ընկել է ոչ միայն բարոյական, այլև տնտեսական ազդեցութեան ներքոյ և, որպէս չքաւոր մարդ, փորձութեանը չը դիմացաւ, փոխեց իր սկզբնական ցուցմունքը, որ նա տուել էր քննիչի մօտ, ի նպաստ մեղադրվողի։ Ապա, ամփոփելով քննելով բժշկապետ Հախվէրդեանի յարաբերութիւնները Շեխանցի հետ և բացատրելով քաղաքացիական պահանջատէրեր եղը. Մակարովների չը գալու պատճառները, որոնք, ինչպէս երևում է, հաշտվել են մեղադրվողի հետ, պրօկուրորի օգնականը ասում է, որ հասարակութիւնը կարդաց իր դատավճիռը, որպէս բժշկի և մարդու վրա, և այժմ նա սպասում է դատարանի վճռին։

Մեղադրվողի պաշտպանը, երդուեալ-հաւատարմատար Կլանկ ասաց, որ ինքն չէ կասկածում, որ դատարանը դուրս կը բերի արդարացնող դատավճիռ, որին բժշկապետ Հախվէրդեան սպասում է 2 տարի։

Նահանգական դատարանը, կէս ժամ խորհրդակցելուց յետոյ, դուրս բերեց բժշկապետ Հախվէրդեանին արդարացնող դատավճիռ։

ԹՕՂԵՐԱ ԵՒ ԺԱՆՏԱՄԽ

◆ Բրլլիտեն.—Սեպտ. 10-ի առ. ժամը 9-ից մինչև սեպտ. 11-ի առ. ժամը 9-ը Թիֆլիսում խօլերայով հիւանդացաւ 1։ Ներկայումս բարակներում կան 4 հիւանդներ։

◆ Ոստիկանական տեղեկութիւնների համաձայն սեպտեմբերի 10-ին Թիֆլիսում խօլերայի նշաններով հիւանդացան և ուղարկվեցին բարակները՝ 1) Տաուզկի Նը[illegible]ողոցում № 6 տանը Զախարի Խուցիեվ 50 տարեկան (քանւոր), 2) երկաթուղային կայարանի բեռնակիր Նիկոլայ Օչարովը 43 տարեկան (մեռաւ)։

Հիւանդացածների բնակարաններն ախտահանված են։

Մ Ի Բ Ա Ց Ա Տ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

«Մշակի» № 196-ում տպված Սալ-Մանի «Փէլիէտոնի» այն պարբերութիւնը, որ վերաբերում է Ս. Բալաղեանի էջմիածնի՝ ճեմարանի տեսուչ հրաւիրվելու հարցին, զանազան մեկնութիւնների ատիթ տուած լինելով, մեզ վրա պարտք դրեց ստուգել եղելութիւնը։ Այդ ստուգումը ցոյց տուեց, որ Սալ-Մանի յօդուածի մէջ անճշդութիւններ կան և նա անհամապատասխան է իրականութեան։ Ուստի և օրէնք թիւրիմացութեան տեղիք չը տալու համար, խմբագրութիւնս պարտք է համարում հաղորդել գործի փաստական դրութիւնը։

Ս. Բալաղեանի կողմից որևէ քայլ չէ եղել և ցանկութիւն կամ առաջարկ՝ ճեմարանի տեսչական պաշտօնը ստանձնելու համար, այլ նա ինքն է ստացել Բագրատվարդապետի միջոցով Ամենայն Հայոց Կաթողիկոսից առաջարկ՝ ստանձնել այդ պաշտօնը, ստանալով 4000 ր. ռոճկի տարեկան, բնակարան և այլն։ Ս. Բալաղեան սկզբում տրամագրութիւն է ցոյց տալիս ընդունել այդ առաջարկը, բայց յետոյ մտածելով էջմիածնի գործերի դրութեան մասին և երկիւղ կրելով այն պատասխանատուութիւնից, որ նա պէտք է ստանձնէ, հրաժարվում է իրան առաջարկված պաշտօնից, չը նայելով որ իրան յատկացվում էր մօտ 5000 ր. ռոճկի, եթէ հաշուենք բնակարանը և այլն։

Հետևաբար սխալ է այն, թէ Ս. Բալաղեան ինքը բարձրացրել է իր գինը, քանի որ ռոճկի քանակութիւնն իր կողմից չէ առաջանում և նա ռոճկի համար [illegible] ժարվել։

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

Անձնական գրագրութիւնները, հասցէներ, գրքեր, ստացուածներ, գրաստներ, ապրանքներ, գրամներ, ինչպէս նաև գրաստներ՝ ուղարկվում են հետևեալ հասցէով՝ Գրիգոր Ալիխանեանի անունով։

Գրաստներ՝ Գրիգոր Ալիխանեանի անունով։

Գրամներ՝ Գրիգոր Ալիխանեանի անունով։

Ամսագրի գրասենեակ՝ Գ. Ալիխանեանի անունով։

Ամսագրի գրասենեակ՝ Գ. Ալիխանեանի անունով։

Ամսագրի գրասենեակ՝ Գ. Ալիխանեանի անունով։

Ամսագրի գրասենեակ՝ Գ. Ալիխանեանի անունով։

10 սեպտեմբերի

Պետերբուրգ.—Խոլերայով մի օրում հիւանդացան 33, մեռան 10, բժշկվում են 570։ (Հ. Գ.)

◆ Քութայիսի նահանգում խոլերայի սկզբից մինչև օրս հիւանդացան 415, մեռան 177 և առողջացան 179 մարդ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ «Մշակի» հետևեալ համարը Մեռելոցի տօնի պատճառով լոյս կը տեսնի չորեքշաբթի, սեպտեմբերի 15-ին։

◆ Թիֆլիսի նահանգապետն այս օրերս մինիստրների խորհրդի նախագահից ստացաւ հետևեալ կարգադրութիւնը. «Ինձ տեղեկութիւն հասաւ որ շատ գրախանութներ ոչ միայն մայրաքաղաքներում, այլև գաւառական քաղաքներում, ցուցադրում են այնպիսի բրոշիւրներ և գրքեր, որոնք վերաբերում են սեռական հարցին զանազան պօրնոգրաֆիական անունների տակ, նաև դեղատան պիտոյքների խանութներում ցոյց են դրվում զանազան գործիքներ, ըէզինի գործուածքներ, դեղերև այլն, որոնք անբարոյականացնում են հասարակական բարոյականը, առանձնապէս երիտասարդութեան մէջ։ Քանի որ արգելք չը կայ դրված այդ տեսակ գրքեր և գործիքների վրա, նրանք կարող են անարգել վաճառվել բայց դրանից դեռ չէ հետևում, թէ նրանց կարելի է ի ցոյց դնել պատուհաններում, որովհետև գայթակղեցուցիչ իրերի ցուցադրութիւնը խստիւ արգելված է օրէնսգրքի 45-րդ յօդուածով։ Հաղորդելով այդ մասին, առաջարկում եմ ձեր գերազանցութեանը պատշաճ միջոցներ ձեռք առնել՝ արգելելու այսուհետև այդօրինակ երևոյթները և արթուն կերպով հսկել, որպէսզի այս կարգադրութիւնը ոչ մի կերպ չը խախտվի»։ Ստորագրեց մինիստրների խորհրդի նախագահ տատաս-սեկրէտար՝ Սոլշիպին»։

◆ Այսօր երեկոյեան ժամը 8-ին տեղի կունենայ Կովկասեան Բժշկական Ընկերութեան նիստը, ուր Բաթումի բժիշկ Տուշինսկին զեկուցում կը կարդայ «606»-ի մասին, որ սրսկել է նա մալարիայով մի հիւանդին։ Նոյն նիստում բժ. Խարազեանը կը զեկուցէ ժանտախտի մասին։

◆ Թիֆլիսի Հասարակական Կլուբը ձրի-ավոյ սեղանը կը բանայ շաբաթ, սեպտ. 18-ին, երեկ. ժամը 8-ին Բօրսայի դահլիճում։ Ի միջի այլոց տեղի կունենան կլուբի անդամների ընտրութիւնները։ Կլուբի երեկոյթները առաջվայ նման տեղի կունենան շաբաթ օրերը։ Բացի դրանից կլուբը բաց կը լինի հինգշաբթի օրերը՝ գրականութեան օգտվելու համար, խորհրդի նիստերի և փորձերի համար։ Հիւրերը անդամների երաշխաւորութեամբ վճարում են 30—50 կոպէկ։

◆ Ի նկատի ունենալով, որ դեկտեմբերի 29-ին լրանում է այն պայմանագրի ժամանակը, որի համաձայն էլեքտրաքարշի ընկերութիւնը վագոնների թիւը հասցնելու է 95-ի, իսկ Աւճալեան և Նախալովկայի գծերի աւարտումից յետոյ 101-ի, մինչդեռ չայժմ երթևեկութեան համար էլեքտրաքարշի ընկերութիւնը ունի ընդամենը 75—80 վագոն, Թիֆլիսի քաղ. վարչութիւնը դիմեց անսիմ ընկերութեան վերատեսչին հարց տալով, թէ ինչ միջոցներ է ձեռք առնում նա՝ կատարելու այդ պարտականութիւնը, նախազգուշացնելով որ քաղաքային վարչութիւնը այդ չը կատարելու դէպքում տուգանք կը նշանակէ ամեն մի անցած օրի համար։

◆ Կանանց բարձր դասընթացքներում կենդանաբանութեան բաժինը ստանձնել է կենդանաբանութեան դոկտոր Վ. Կազանցէվը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամ իշխան Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկի նախագահութեամբ կայացաւ Թիֆլիսի ուղեցոյց կազմելու յատուկ մասնաժողովի նիստը։

◆ Բագուի քաղաքագլխի օգտական նշանակվում է Կովկասի Փոխարքայի դիւանապետ գործավար Բաշնակովը։

◆ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատար գեն. Շատիլովի կարգադրութեամբ ախտահանվելու են Թիֆլիսի բոլոր զօրանոցները։

◆ Վերադարձաւ զինուորական պատմական բաժնի կառավարիչ գեն.-լեյտ. Պոտոն և ստանձնեց իր պարտականութիւնները։

◆ Յօգուտ Զուբալովի ժողովրդական Տան երաժշտական ընկերութեան նշանակված զբօսանքը կայանալու է այսօր. «Մշակի» երէկվայ համարում սխալմամբ տպված էր իբր կայանալու էր երէկ։ Զբօսանքի սկիզբն է երեկոյեան ժամը 4-ից։ Ծրագիրը շատ ճոխ է։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Աւճալեան փողոցում № 102 տանը ապրող Եակով Վլադիսլավսկին յայտնեց ոստիկանութեան, որ առաւօտը կինը դուրս գալով տնից, բանալին թողել էր պատշգամբում դրված սեղանի վրա։ Երբ կինը տուն է վերադառնում, տեսնում է որ սենեկի դուռը բացել են և գողացել 40 ը. 97 կոպէկի ոսկեղէն և արծաթեղէն և թէյի կէս դիւժին արծաթէ գդալներ։

◆ Սեպտեմբերի 9-ին, առաւ. ժ. 6-ին, Օրբէլեանովսկայա փող. № 4 տան պատշգամբում գտան այդ տան կեցող Անդրէաս Եակովի դիակը կախված։ Ինքնասպանութեան պատճառներն անյայտ են։ Դիակն ուղարկվեց հիւանդանոց։

◆ Սեպտեմբերի 10-ին Թիֆլիսի վրաց գիմնազիայի վերատեսուչ Ալէքսանդր Մղիվանին յայտնեց ոստիկանութեան, որ նոյն օրը, ցերեկվայ ժամը 9-ին, յիշեալ գիմնազիայի 7-րդ դասատան նախկին աշակերտ Իշխան Իոսիֆ Վաչնաձէն՝ 22 տարեկան, որ արձակվեց գիմնազիայից հոգաբարձական մարմնի որոշմամբ, սպանելով իր դուրս գալուն, հարուածեց բռունցքով երեսից, որից նա ընկաւ, և երբ բարձրացաւ, նոյն դասարանի աշակերտ Նիկոլայ Ցինամզգվարովը, որը նոյնպէս այդտեղ էր, վազեց Մղիվանիի մօտ և հարուածեց նրան ոտքով մէջքից։ Երկու յանցաւորներն էլ կալանաւորված են։

◆ Սեպտեմբերի 10-ին, երեկոյեան ժամը 10-ին, Վլադիմիրսկայա փող., Ծղալօբ Բաթիէվի պանդոկում Թիֆլիսեցիներ Պաւել Սաակաձէն, Միխայիլ Նէսբաշվիլին, Իսակ Զիտաէվը և Դէօրգի Զարիձէն (բռնակիր սայլապաններ) հարբած, իրար մէջ վէճ բացին, որ փոխվեց ծեծ ու ջարդի, որի ժամանակ Պաւել Սաակաձէն դանակով վէրք հասցրեց Դէօրգի Զարիձէի կրծքին։ Վիրաւորվածին հիւանդանոցում բժշկական օգնութիւն հասցնելուց յետոյ ուղարկեցին տուն։ Սաակաձէն կալանաւորված է։

◆ Սեպտեմբ. 9-ին ոստիկանական պաշտօնեաները և զինուորական պահակախումբը շուրջկալի ժամանակ ձերբակալեցին I քաղաքամասում 14, V-ում՝ 20 անգործ և անանցաթուղթ մարդկանց։

ԻՏԱԼԻԱ., ԴՐԱԿԱՆ., ԳԵ'ԼԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Սեպտեմբերի 10-ին Զուբալովեան Ժողովրդական Տանը ռուսաց դրամատիկական սիրողների խումբը ձմեռվայ սեզոնի բացման առիթով ներկայացրեց Մ. Լէնժիլի 4 գործ. «Տայֆունն» պիէսը։

Այս պիէսը նոր է և մեծ աշողութիւն գտաւ արտասահմանում. ներկայումս մայրաքաղաքի թատրոնների բեպէրտուարի մէջ ևս մտել է նա։

Պիէսի բովանդակութիւնը մօտաւորապէս հետևեալն է։

Նիտօբօ Տօկէրամօն ուղարկվում է Եապոնիայից Պարիզ՝ եւրոպական լեզուները ուսումնասիրելու պատրաստելի տակ։ Տօկէրամօն ապրում է գեղեցիկ կահաւորված բնակարանում միայնակ իր միակ սպասաւորի հետ։

Սակայն Տօկէրամօն մենակ չէ Պարիզում։ Նրա մօտ շաբաթական մի քանի անգամ ժողովվում են նրա հայրենակիցները, որոնք երկար խօսում են, խորհում և վերջը, հագնելով հայրենական տարազները, նստում են թէյի և պահ մի երևակայում՝ թէ գտնվում են իրանց սիրելի հայրենիքում...

Պատկերը լրանում է ազգային երգի մեղմ հնչիւնների արձագանքով...

Ըստ երևոյթին եապոնացիների Եւրոպա գալը ոչ թէ լեզուներ սովորելն է, այլ իրօք յատուկ միսիայով, գաղտնի յանձնարարութեամբ, մի սրբազան «գործի» համար, որի զեկավար հանդիսանում է Տօկէրամօն։

Հէնց այս գլխաւոր նպատակն է հեղինակի պիէսի իմաստը, որի մէջ նա բաւական պարզօրէն ընդգծում է եապոնացիների վերին աստիճանի հայրենասիրական ոգին, անձնուիրութիւնը, «գործին» ծառայելու կենդանի պատրաստակամութիւնը, նրանց միջև տիրող անքակտելի շաղկապը օտար տեղում և այլն։

Իսկ դրամայի պատճառ դառնում է Թեբէզա Լաւրշը, որ մեղմաւոր կապեր է հաստատում Տօկէրամօյի հետ և լինելով նրա սիրուհին, կանացի հեշտանքի բօպկներին կարողանում է գաղտնիքներ պոկել իր սիրեկանից և յայտնել դրսում։ Եւ ահա, մի բացատրութեան ժամանակ Տօկէրամօն, չը հանդուրժելով Լաւրշի սանձարձակ մերկացումներին, «եապոնական գործի» հնարաւոր վտանգի երկիւղի տակ ցասումով յարձակվում է նրա վրա և խեղդամահ անում։

Ապա տեղի է ունենում երկար դատաւարութիւն, ուր, խորամանկ եապոնացիների նախօրօք կազմած ծրագրի համաձայն, Տօկէրամօն արդարանում է, իսկ 7 տարի քանտարկութեան է դատապարտվում մի երիտասարդ եապոնացի՝ ի նշան ծայրայեղ ինքնազոհութեան յանուն գործի...

Վերջին գործողութեան մէջ Տօկէրամօն իր առանձնատեղեակում աւարտում է այն աշխատանքը, որի համար և նա Եւրոպա էր եկել։ Միևնոյն ժամանակ նրա մէջ կատարվում է հսկայ փոփոխութիւն, երբ սկսում է գլուխ բարձրացնել զղջման բռնկումը... Նա ընկնում է տանջանքների մէջ իր սիրուհու ուրուականի սարսափի տակ։

Ու անկարողանալով տանել այդ դրութիւնը, հոգին ազատում է, ի հարկէ, հաւաստիացնելով ընկերներին, որ իր մահսիան նա կատարեց մինչև վերջը...

Պիէսում բերված են նաև նմուշներ եւրոպական բարքերից, ըստ որում հեղինակը առաջադրում է եապոնացիներին սիրող և հակակրող երկու տիպեր ևս, որոնց թեր և դէմ կարծիքները ինքնին առատ նիւթ ծառայած են արդէն շատ գրուածքների մէջ։

Թւում է, հեղինակը պիէսը գրել է այլաբանական ժամով։ Եապոնացին ըստ էութեան խորթ է եւրոպական կուլտուրային, սակայն նա պահանջ է զգում, գիտակցելով իր համեմատական յետամնացութիւնը, սկզբից ձեռք բերել քաղաքակրթութիւն Եւրոպայում, ուսումնասիրելով նրա լեզուները և գիտելիքները։ Կանգ չառնել ոչ մի զոհաբերութեան առաջ և պատրաստվել ապագայ «ազգային» վեհ և սուրբ գործի համար, երբ Արևելքի 50 միլիոն եապոնազգը հեղեղելու է թէ Եւրոպան և թէ հանուր աշխարհը... Զինվելով Եւրոպայի քաղաքակրթութեամբ և կուլտուրայով, եապոնացին երազում է այդ միևնոյն զէնքը ապագայում ուղղել հէնց եւրոպացիների դէմ...

Պիէսը լսվում է հետաքրքրութեամբ, ունի շքեղ դեկորացիաներ և հրապուրիչ տեսարաններ։ Գուցէ և կան կտորներ, որոնք կարող են ենթարկվել կրճատման։

Խաղը, իսկապէս ասած, անցաւ սահուն և լաւ անսամբլով։ Տօկէրամօյի դերը կատարող Լարսկին ունեցաւ աշողութիւն։ Իմաստալից էր նաև Կօբեակօվի խաղը գրող Շարլի բացասական դերում։ Ելենա Լարոշի դերը արտայայտութիւն գտաւ տ. Լվինսկայայի խաղով։ Ընդհանուր տպաւորութիւնը խաղից բաւարար էր։

Թատրոնը լի էր ընտիր հասարակութեամբ։

Պիէսը կը կրկնվի։ Ն.

«ՄՈՒՐՆԵՐԻ ՏԱԿԻ Ց»

Աւ. Ահարոնեանի

I

Աւ. հասարակ Ահարոնեանը շնորհքով նկարագրող է. նրա գրչի տակ իրականութիւնը դառնում է չափազանցրած գոյներով իւրացրած պատկեր. և որովհետև այդ պատկերը իր մէջ շատ քիչ իրական գծեր է պարունակում, ուստի այն տպաւորութիւնն ու ազդեցութիւնը չէ թողնում մարդու վրա, ինչ որ իրականօրէն նկարագրածը։

Ահարոնեանի հերոսներն էլ միշտ շինծու, մակա հագած մարդիկ են թւում, որոնք գործում են՝ անխօս ու լուռ. միայն հեղինակն է պատմում, որ այս-ինչը այսպէս էր, այնպէս էր, այս էր ուզում անել, այս արաւ և այլն... Մեզ միշտ անյայտ է մընում նրա հերոսների հոգեբանութիւնն ու բնաւորութիւնը, նրանց իսկական դէմքը, որ առանց դրանց գրուածքը լինում է անաւելի ու գունատ։ Ահարոնեանի հերոսները եթէ խօսում էլ են, իրական, կեանքի լեզուով չեն խօսում, այլ ինչ-որ սիթերային, փափուկ ոլորուն դարձուածքներով ու ոճերով, որ միշտ թւում է արհեստական ու շաղախած, իրականութիւնից հեռու։ Պարզ երևում է, որ Ահարոնեանը ոճի վրա շատ է աշխատում և գլխաւորապէս ուշադրութիւն է դարձնում ու առաջնակարգ տեղ է տալիս ընութեան ու արտաքին նկարագրութեան, իսկ նիւթի մշակութիւնը, հերոսների հոգեբանութիւնը և տիպական պատկերացումը թողնում է իբրև երկրորդական, երրորդական գործ։

Երբ մարդ լրջութեամբ (ոչ ժամանակ անցկացնելու համար) կարդում է Ահարոնեանի գրուածքները (բացառութեամբ մի քանի պատմուածքների), նրա առաջ պարզվում է ամեն ինչ... Երբ գալիս է հոգեբանական բարդ երևոյթները պարզելու տեղը, Ահարոնեանը անմիջապէս շտապում է խուսափել այդ նեղ դրութիւնից և մի ինչ-որ աւելորդ տեսարան ստեղծելով՝ ընթերցողին զբաղեցնում է նրա նկարագրութեամբ, և եթէ ձեռնամուխ էլ է լինում պարզել այդ պսիխական երևոյթը, նա մերկանում է ու խեղճանում, մի խօսքով չէ աջողվում նրան, չենք ասում բոլորովին, որովհետև նա տուել է մի քանի պատմուածքներ, որոնց հերոսների հոգեբանութիւնը անպայման ճիշդ է, օր. «Մայրերի» մէջ՝ մօրը, «Օհանի վշտի» մէջ՝ Օհանինը և մի-երկու ուրիշ պատմուածքների հերոսներինը։ Բայց ընդհանրապէս նա՝ Ահարոնեանը՝ մեզ է իսկական ազատագրող։ Եւ այն մեծ սխալ է, որ Ահարոնեան Իւրիյ Վեսելովսկին ուղարկած իր խոստովանութեան մէջ ասում է. «...Ռուս գրողներից եթէ եղել է մէկը, որ ազդել է ինձ վրա, դա Դոստոյևսկին է իր մռայլ ու դաժան տաղանդով...»։ Իա թիւրիմացութիւն է։ Դոստոյևսկիի ազդեցութիւնը չէ երևում Ահարոնեանի գրուածքների վրա։ Ռուս հանճարեղ հոգեբանի և հայ նկարագիր-բօժանտիկ Ահարոնեանի միջև անապին սարեր կան։ Դոստոյևսկին նկարագրում է մարդու հոգու ապրումները և պարզում է շատ խորախորհուրդ գաղտնիքներ, իսկ Ահարոնեան նկարագրում է արտաքինը, մակերևոյթը և ընութեան եղանակների փոփոխելը։ Դոստոյևսկին կոպիտ, առանց բանաստեղծական ոլորուն բառերի, պարզ պատմում է մի դէպք, և ընթերցողը նրա մէջ զգում է անհուն տառապանք ու խոր վիշտ։ Նոյն բանն զգում է մարդ, երբ կարդում է Մօպասանի և Չեխովի պատմուածքներից շատերը, որոնք միշտ պատմվում են ծիծաղով։ Բայց Ահարոնեանը՝ ողբ ու կոծով, սուգ ու լացով աշխատում է ցոյց տալ, որ իր պատմածը ցաւալի է, զարհուրելի է, սարսափելի է, և սակայն մենք այնքան, ինչպէս հեղինակն է ասում, զարհուրելի ցաւ ու վիշտ չենք զգում, միայն բառերն են, որ հնչվում են՝ «զարհուրելի է, սարսափելի է...»։ Եւ դա հասկանալի է թէ ինչու. որովհետև Ահարոնեանը պատմում է չափազանցրած և հերոսների փոխանակ ինքն է գործում ու խօսում. իսկ մեր մէջ բերած գրողները՝ ընդհակառակը։

Դոստոյևսկիի և Ահարոնեանի միջև, եթէ կայ մի շատ քիչ նմանութիւն, դա մտայլութեան գիծն է, որը առաջինի մէջ անհուն խորն է և համակում է նրա ողջ էութիւնն ու հոգին, իսկ երկրորդի մօտ այդ գիծը մի թափանցիկ շղարշ է, որի տակից պարզ երևում է նրա իսկական դէմքը։

II

Այս տարի Ահարոնեանը տուել է մի դրամատիկական հիւսուածք «Ուխտվածներ» և երեք պատմուածք՝ «Հայրը», «Անդունդը» և «Մոխիրների տակից»։

Վերջին պատմուածքի մէջ հեղինակը նըկարագրում է մի կնոջ, որ ութ տարի ամուսնացած է փաստաբան Զանիկեանի հետ և վերջինիցս ունի մի թուլակազմ, վատառողջ երեխայ, որի քթից շուտ-շուտ արիւն է հոսում։ Փաստաբանը բուռն սիրով սիրում է իր գեղեցիկ աղանեակին և նրա գերին է, կամակատարն ու հաճոյակատարը։ Ոչ մի բան չէ խնայում նրան։ Բայց կինը արհամարհում է ամուսնուն, ատում է նրան հոգու ամբողջ այժով, ատում է նրա կարճ վիզը, հաստ կազմուածքը, շարժումները, գործի թղթերը և միևնոյն ատամ ձայնը, որ ամեն ճաշի ժամանակ հարցնում է.

— Սօֆիկ, ճաշը պատրաստ է...

Կինը այդ հարցին միշտ պատասխանում է զզուանքով։

Այս բոլորը կատարվում է ոչ թէ դրամատիզմօրէն, կենդանի կերպով, հոգեբանօրէն, այլ հեղինակն է պատմում, որ այսպէս էր երկու ամուսինների յարաբերութիւնը։

Տիկին Սօֆիան 8 տարի առաջ ուսանողուհի ժամանակ սիրել է Սուրէն անունով մի ուսանողի, ոգևորվել, յափշտակվել է նրա մարդասէր գաղափարներով։ Սէր է յայտնել, բայց սէրը արձագանք չէ գտել երիտասարդի կողմից։ Ու բաժանվում են։ Ութ տարուց յետոյ, «երբ նոր գաղափարները ակօսում են իր ծիծաղ հասկացողութիւնների ժայռը», լրագիրները Սուրէնի մասին շատ են գրում։ Տիկինը շարունակ կարդում է այդ գրուածքներն ու նրա հոգում զարթնում է Սուրէնի պատկերը և նա աւելի ատել է սկսում ամուսնուն։ Սուրէնի պատկերը հանգիստ չէ տալիս, տիկինը ձանձրանում է և ձանձրոյթից վերջապէս մի օր ձմեռնամտին յայտնում է մարդուն, որ ուզում է մենակ ճանապարհորդել դէպի արտասահման։ Զանիկեանը՝ հաճոյակատարներին յատուկ տոնով՝ մեղմօրէն ասում է, որ ամառը միասին կը գնան. բայց ով է լողը. կինը պնդում է իր ասածը և սկսում է լալ։ Կամակատար Զանիկեանը համաձայնութիւն է տալիս։ Տիկինն ուրախանում է, որ կարող է թողնել ամուսնուն և երեխային ու ազատ մենակ ճամբորդել։ Բայց գնալուց առաջ պատահում է Սուրէնին շատ վատ պարագաներում. սա զինուորների սուլիներով շրջապատված տարվում է քանտ։ Այդտեղից յիշողութիւնները շարան-շարան բարձրանում են մոխիրների տակից...

Եւ Ահարոնեանը անցեալի կեանքը ըսկըսում է նկարագրել բազմաթիւ երեսներով։ Այդ նկարագրութիւններն էլ նոր չեն. որոշ չափով և համարեա թէ՝ նման են նոյն հեղինակի «Լուութիւն» վէպի նկարագրութիւններին. նոյն ջրերը, անտառները, դաշտերը, սիրային խօսքերը և այլն։

Սուրէնի պատճառով ամուսինների մէջ տեղի է ունենում ընդհարում, և կինը մարդուն անվայել խօսքեր շպրտելուց յետոյ՝ մի երկար ճառ է ասում, որ ինքը նրա համար եղել է մի խաղալիք, տիկնիկ (Իբսէն՝ «Նօրա»), իր ծաղիկ կեանքը խամրել է նրա ձեռքին և այլն... Ճառի վերջում տիկինը պահանջում է ամուսնուց, որ «առաքինութիւն ունենայ խոնարհվելու անձնազոհ հերոսների հպարտ, ազնիւ խոյանքների առաջ...» (ինչպիսիներից մէկն է Սուրէնը)։ Եւ տիկինը հեկեկալով ընկնում է դիւանի վրա... Երբ Զանիկեանը լքված հարցնում է կնոջը՝ «Դու սիրո՞ւմ ես նրան» (այսինքն Սուրէնին), կինը բարձրանալով՝ առանց տատանվելու պատասխանում է. «Այո»։ Զանիկեանը ճակատը բռնելով նայում է առաստաղին և գնում դրասենեակ։

Պրծաւ գնաց... Մթթէ հեշտ է մի ամուսնու համար, որ ութ տարի բուռն սիրով սիրել է կնոջը, գերի է՝ եղել նրան, պաշտել սրբի տեղ, և յանկարծ լսի, այն էլ կնոջ բերնից, որ նա սիրում է ուրիշին. ու ինքը ոչ մի հոգեկան ցնցում չը զգայ, այլ բաւականանայ միայն ճակատը բռնելով... Եւ Ահարոնեանը, փոխանակ մեզ երկու բարձրացած հոգիների վերլուծումը տալու, բաւականանում է արտաքին, անհամապատասխան նկարագրութեամբ։ Դոստոյևսկիի ազդեցութիւնը եթէ կար մի որոշ չափով, այստեղ պէտք է երևար անպայման։ Բայց որովհետև Ահարոնեանը հոգեկան այդ դրութիւնը պարզելու համար շատ նեղ տեղն է ընկնում կամ չէ կարողանում, ուստի մի աւելորդ կտորով վերջացնում է պատմուածքը։

Երեխան արիւնհոսութիւն ունեցաւ, ծընողները զբաղվեցին նրանով, և մինչև բժշկի գալը նա մարեց։ Մի շաբաթից յետոյ Զանիկեանը էլ այդելուներ չէ ընդունում. տիկ. Սօֆիան էլ չը կայ։ Զը գիտենք ուր է գնացել։

Պատմուածքը ընթերցումից յետոյ, բոլորովին տպաւորութիւն չէ թողնում. թէև հեղինակը աշխատում է ցոյց տալ, որ իր հերոսուհին տանջվող, խեղճ կին է, բայց այնուամենայնիւ նրա «տանջանքը» մեր հոգում ոչ մի ցաւակցական զգացմունք չէ զարթեցնում։ Պատմուածքի մէջ չը կայ մի ամբողջացած տիպ, մի դէմք, որ արտայայտի կեանքի այս կամ այն վշտի ու խնդութեան մի որևէ գիծը։ Զը կայ գործողութիւն, դրամատիզմ և իրական գծերի հաւաքական մի ամբողջացում։ Եթէ պատմուածքի սիրուն և սահուն ոճը չը լինի, նա շատ ձանձրութեամբ կը կարդացվի. միայն գեղեցիկ, պատկերաւոր ոճն է, որ կարդացնել է տալիս, որը շատ ճոխացել է և բարձրացել։ Սակայն ինչ նշանակութիւն ունի ոճի այդ տեսակ բարձր լինելը։

Մեր կարծիքով՝ ոճը գրողների համար երկրորդական նշանակութիւն պիտի ունենայ (բայց Ահարոնեանի մօտ այդպէս չէ). առաջին տեղը պէտք է տալ նիւթին, պէտք է լաւ որոճալ այն, գտնել որոշ կաղապարի մէջ և ապա գրել այն ոճով՝ ինչ ոճ կը պահանջի ինքը նիւթը։ Իրական կեանքից վերցված պատկերը պէտք է պատմել լրացկան ոճով, որպէսզի ազդեցութիւն թողնի։ Չէ կարելի հօ հէքիաթը գրել գիտական ոճով, կամ գիտական աշխատութիւնը հէքիաթի ոճով։ Գիւղացին խօսում է իր ժիջավայրի առանձնայատուկ բարքաւով, քաղաքացին՝ իր. չէ կարելի այդ երկուսը շփոթել։ Սըրանք այնպիսի տարբերական հակացողութիւն դարձած ճշմարտութիւններ են, որ աւելորդ էր կրկնել։ բայց կարիք է զգացվում կրկնելու։ Ինչպէս ասացինք, Ահարոնեանը ոճին մեծ նշանակութիւն է տալիս, բայց նրան չէ գործածում ինչպէս կարգն է. նրա համար միևնոյն է՝ հէքիաթ, իրականութիւն, գիտութիւն... բոլորը միևնոյն ոճով է գրում ու պատմում։

Մեր գրողներից մի քանիսը միշտ աշխատում են որքան կարելի է շուտ և շատ գրել, և մի նիւթ, որ կարելի է պատմել կարճ, ամփոփ, գեղարուեստօրէն, նրանց գրչի տակ պահանջում է երեսներ։ Իսկ այդպիսի գրուածքները ընթերցողին ձանձրացնում են և ժամանակ խլում։

Նրանք չեն ուզում հասկանալ, որ լաւ է տարեկան մի-երկու պատմուածք տալ մըտածված և առողջ յղացած, քան տասը թոյլ ու անաջող, որոնք, ինչպէս Հէյնէն է ասում, շուտով մեռնում են օրպակաս երեխայի նման։

Այս բոլորը արգասիք է բացակայող գրական քննադատութեան։ Ֆօն-Մօրիս

ՄԱՄՈՒԼ

Կոմս Լօրօնցօվ-Դաշկովի ամենահպատակային զեկուցումները Կովկասի կառավարութեան մասին, ներկայացված 1907 և ներկայ 1910 թուերին, առիթ է տուել ռուսական թերթերին զանազան խորհրդածութիւններ և գնահատումներ անել։

«Утро Россіи» թերթը հետևեալ առաջնորդող յօդուածն է գրել.

Կովկասի Փոխարքայի ամենահպատակային հաշիւը, անկասկած, շատ մեծ շահեկանութիւն է ներկայացնում։ Այդ շահեկանութիւնը ոչ միայն յատուկ կովկասեան է, այլ և համառուսական։ Այն լուսաբանութիւնը, որ Փոխարքան տալիս է կովկասեան գործերին, պահանջում է մանրամասն վերլուծում, որ մենք կը տանք մեր լրագրի յետագայ համարներում։ «Ռուսական թագի մարգարիտը», «բարեբեր ծայրերկիրը»—ինչպէս երբեմն կոչում էին Կովկասը պաշտօնական աղբիւրները—անտարակոյս արժանի է իր վրա դարձնելու ռուսաց հասարակութեան ամենալուրջ ուշադրութիւնը։ Կովկասը թանգ է Ռուսաստանի համար և տնտեսական, և ռազմագիտական նկատումներով։ Ռուսաստանը պէտք է գործադրէ բոլոր ջանքերը, որպէսզի Կովկասն իրան զգայ նրա հարազատ և ոչ խորթ զաւակ։

Պէտք է արդարացի լինել այժմեան Փոխարքայի վերաբերմամբ. նա շատ բան է արել, որպէսզի Կովկասում արմատանան հէնց այդ զգացումները դէպի Ռուսաստանը։ Հէնց դրա համար և նրան այնքան սաստիկ ատում են մեր պահպանողականները։ Եթէ կոմս Լօրօնցօվ-Դաշկովը յարատև պահպանէր Կովկասում թշնամութեան և ատելութեան տրամադրութիւնը,—տրամադրութիւն, որ մեծ-ըստ կարող էր ծառայել պատրուակ բէպրէսսիաների համար,—այն ժամանակ նրանց իրանց մարդ կը համարէին և կը գովէին։ Իսկ կոմս Վ.-Դաշկով, անկասկած, կարծում է, թէ բէպրէսսիան կառավարչութեան այնպիսի մի միջոց է, որ լաւ է միայն պետական և հասարակական կեանքի ամենածանր բօպկներում։ Ինչպէս կարող է համակրութիւն վայելել աշխկողմնականների բանակում մի վարդապետ, որ այդպիսի հայեացքներով է զեկավարվում։

Սակայն կովկասեան Փոխարքան հաւանօրէն բանի տեղ չէ դնում այն սանձարձակ պարսաւները, որոնց նա երբեմն երբեմն ենթակայ է ամբողջ աջ ժամուլի կողմից։ Նա անում է այն, ինչ որ հարկաւոր է համարում։ Եւ նրա վերջին հաշիւը ցոյց է տալիս, թէ որքան քիչ է նա թոյլ տալիս Կովկասի «սև» և «կիսասև» հնուաններին՝ շեղել տալ իր բռնած դիրքից։

Ռուս լրագիրը վերջացնում է իր յօդուածը այս խօսքերով.

Մենք ուրախ ենք հաստատելու, որ կոմս Լօրօնցօվ-Դաշկովի հաստատած բէժիմը Կովկասում ցոյց է տալիս Փոխարքայի մէջ վարչական իշխանութեան գործերի իսկական հասկացողութիւն։ Նրա մէջ կայ հաստատ վստահութիւն իր ոյժի մասին, որ վարչապետի լաւագոյն յատկութիւնն է։ Դա անդրադառնում է ամբողջ կառավարչութեան վրա։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԼԱՒ Է ՈՒՇ ՔԱՆ ԵՐԷԷՔ

—

Օրդուբաթ, 5 սեպտեմբերի

Երկու տարի առաջ Օրդուբաթում ժամանակաւորապէս ապրող հռչակաւոր Համբ. Մալայեանը իր ծանօթների շրջանում, յո-

գուտ Անապատ թուրքարնակ գիւղի խանգարված ս. Մտեփաննոս եկեղեցու վերանորոգութեան, ժողոված փողը այս տարվայ օգոստոսի 16-ից գործադրութեան դրեց։

Հոգևոր և մարմնաւոր իշխանութիւններից թոյլտուութիւն և տեղական թուրքերից համախօսական ստանալով, սկսեցի մշակ բանեցնել։ Նախ՝ եկեղեցու միջի հողը և քարակոյտը մաքրել տուի, նրա շուրջը եղած պատերը թափթփված հողերից ազատեցի, չորս կողմի պատերը բարձրացրի. առել եմ հարկաւոր գերանները՝ ծածկի և տախտակները՝ դռների և յատակի համար. Ունում է ինձ եկեղեցին շրջապատել մի ընդարձակ պարիսպով, որի մէջ պիտի ներփակվեն 2 դար առաջ հանդուցեալ հայ անապատեցոց գերեզմանները։ Այս պարսպի մէջ պիտի շինվեն սենեակներ՝ ուխտաւորների համար, խոհանոց, ամբար, խոտի, փայտի, ածուխի և ուրիշ մթերքների համար և մի ընդարձակ գոմ՝ ուխտաւորների դրատի համար։ Մտադիր եմ մօտիկ սարում երևացող ջրի հետքը բռնել ու սարի տակ մտնելով՝ ուխտատեղի համար բաւարար աղբիւրաջուր դուրս բերել։

Այս ամենը աւարտելուց յետոյ մեր Օրդուբաթի բացվելիք ծխական ուսումնարանը կարող պիտի լինի այս ուխտատեղից բաւական արդիւնք ունենալ, ինչպէս որ ծրագրել էին երկու տարի առաջ մի քանի բարեմիտ ուխտաւորներ, հէնց նոյն եկեղեցու աւերակների մէջ նստած միջոցին։

Այս ամեն վերանորոգութիւնները և նոր շինութիւնները փողով պիտի գլուխ գան. մեր բարեսիրտ Հ. Մալայեանի մեզ հասցրած փողը շատ չնչին գումար է. մեր ծրագիրը գլուխ բերելու համար, ուրիշներից ունեցած ակնկալութեան ճաշակս դեռ սահմանափակում եմ. խօսքս ուղղում եմ օտարութեան մէջ ապրող՝ դիրք և միջոց ունեցող օրդուբադցիներին. խնդրում եմ, որ նրանք օգնեն ինձ պատուով դուրս գալ այս ծանր լուծի տակից. գործը կիսատ թողնելով, կարող է շինուածքը քանդվել, փչանալ. ուսումնարանի դռները փակ են, միջոց չունենք բանալու և 40 աղջիկ ու 20 տղայ փողոցներում վազվզելուց ազատելու։

Օրդուբաթում մնացել են 25—30 տուն գրեթէ խեղճ հայ ընտանիք, որոնք մեծ դժուարութիւնով հազիւ հազ կարողանում են պահել իրանց գերդաստանը. առանց դրսի օգնութեան անհնար է մեզանում դպրոցի գոյութիւնը։

Ուխտատեղը շինելով՝ ուսումնարան պահելու հարցը գրեթէ կիսով չափ ապահովված կը լինի։

Ձեզ եմ դիմում, պարտազդաց օրդուբաթցիներ, ձեր օժանդակութեանն է սպասում ձեր հայրենիքում առաջին անգամ ուսումնարան բանալու հարցը։

Երբ իմ ձեռնարկած բոլոր շինութիւնները աւարտվեն, հրապարակով մանրամասն հաշիւ կը ներկայացնեմ թէ մուտքի և թէ ծախսի։

Նուիրատուութիւնը ուղակի Ордубатъ, ктитору арм. церкви, Галусту Крикорянцъ.

Երեցփոխ Օրդուբաթի հայոց եկեղեցու՝
Գալուստ Գրիգորեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
10 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական Խորհրդի անդամ Ֆօն-Դէրվիզին յայտնվեց Բարձրագոյն շնորհակալութիւն 50-ամեայ ծառայութեան համար։

ՐՕՍՏՕՎ Դ./վ.։ Բացվեց գիւղատնտեսական ցուցահանդէս։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ Զինուորական դատարանը ոստիկանապետի նախկին օգնական Գօլօվկօյի և երկու քաղաքապահների գործի առիթով, որոնք մեղադրվում են 1908 թ. երեք բանտարկեալների սպանելու մէջ, դատապարտեց Գօլօվկօյին մահվան պատժի, ոստիկաններին արդարացրեց։

ԵԱՐՕՍԼԱՒԼ։ Իր պահակատեղում կանգնած բանտապահ Կոլէսնիկովը երեք անյայտ անձերից վիրաւորվեց ձեռքից։

ՍԿԷՐՆԵՎԻՃԻ։ Կրակի հետ անզգոյշ վարվելուց պայթում առաջացաւ Պավլովսկու դեղատան պիտոյքների խանութում։ Եօթ հոգի հրդեհաշէջներից ստացան վէրքեր, որոնցից երկուսը մահացու։

ՍԷՎԱՍՏՕՊՕԼ։ Վախճանվեց Սէվաստոպոլի պաշտպանութեանը մասնակցած կապիտան Ռէվուցկին։

ՐԻԴԱ։ Քաղաքի ծայրում գտնվեցին անտառի մէջ երեք ռումբ և հրաշէններ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Զինուորական մասնագէտ-բժիշկների
Երթևեկ հիւանդների համար
Վանքի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՈՊ.
Տէլէֆոն № 481.

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը 9½-ից մինչև 5-ը ցերեկվայ։

ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.։

ՈՒԿԼԱՆՆԻԿՕՎ Ի. Օ.—ներքին հիւանդութիւններ, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.։

ՎՆՈՒԿՕՎ—խերուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 12—1 ժ. ցեր.։

ՐԻԴԷԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ. ցեր.։

ՄՕՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—3 ժ.։

ԽԱՏԻՍՕՎ Ն. Դ.—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի և երեքշ. օրերից։

ՆՕՎԻՑԿԻՑ—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 1—2 ժ.։

ՍԱՐԱՊ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 12—1 ժ.։

ՏԷՏՐԱՇԷՆ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.։

ԱՍՊԻՍՕՎ Ն. Մ.—ականջի, կոկորդի և քթի հիւ., առ. ժամը 1—2 ը ցեր.։

ԿԻՆ Բ.Ժ. ԻՕՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.,

ՎԵՍԵԼՕՎԶՕՐՕՎ Ն. Ն.—խերուրգ. հիւ.։ ամեն օր՝ ցեր. ժամը 2—3-ը։

ԶՈՒԴՆՕՎՍԿԻ—ջղային, հոգեկ. հիւանդ. և էլեքտրոթերապիա., ամեն օր՝ բացի կիրակի օրերից՝ ցեր. ժ. 4—5-ը։

ՄԿՐՏՈՒՄԵԱՆ. — սիֆիլիս, միզասեռ., վեներ. և կաշուի, ամ. օր՝ 10½—11 ժ. առ.։

ՊՕՆԴՕԵՎ—ջղային հիւ. և էլեքտրոթերապիա. ամեն օր, ժամը 11—12-ը։

Համախորհուրդ, օպերացիաներ, մասսաժ, ծաղկի պատուաստումներ, անալիզ, հիպնոզ, ատամների և ծառաների քննութիւն—առանձին վճարով։ Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի։

(Կ.) 356. 100—51

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
հիւանդութիւններ։

Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (Երեխաների) 5—7 ժ. երկ. (ընդհանուր)

Միքայէլեան փող., № 36. Տէլէֆոն № 38

(Ե.Հ.Կ.) 909. 100—17

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԻԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ

Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինովսկայա փող. № 8

(Կ. Հ.) 564. 100—43

ՖԻԼԴՇԷՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ՄԵԳԻՅԻՆԱՅԻ

ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Կատարում է սրսկումներ, վէրքի փաթաթում, դեղերի քսում (втираніе) և այլն։ Բժշկութիւն տալարդի սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնաճնսութեան եւ երազախաբի։ Մասսաժ էլեքտրական և ձեռքով։ Բժշկական մարմնամարզութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների—վեներական, ներքին և այլ հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր։ Շաբաթներին ձրի միմիայն չորեքշաբթի օրերը։ Զօրօնցօվի արձանի մօտ, Семеновская ул. № 9.

(Կ. Հ.) 913. 50—9

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՂԲ. ԱՎՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ

այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի պըտղատու ծառեր ու դէկորատիվ բոյսեր։
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.).
Կատալօգն ուղարկվում է Ձ Ր Ի.

(Կ. Հ.) 1068. 15—1

Սանահնի դպրոցի համար հարկաւոր է մի
ՓՈՐՁՎԱԾ ՎԱՐԺՈՒՀԻ

Պայմանների մասին տեղեկանալ Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի մօտ, Միքայէլեան պրօս. № 138

1067. 1—1

ՄԻ ՕՐԻՈՐԴ,

որ աւարտել է գիմնազիայի 8-րդ դասարանը, ցանկանում է ՈՒՆԵՆԱԼ ԴԱՍԵՐ յատկապէս ռուսերէն։ Բէքուտօվսկայա փող. № 41, ձախ թևի վերևի զանգը։

1064. 1—1

ԿԱԽՎՈՒՄ ԵՆ
ՀՈՂԱՄԱՍԵՐ

84 քառ. սաժէն մեծութեան և աւելի, ՆԱԽԱԼՕՎԿԱՅՈՒՄ, չոր և առողջապահիկ տեղում, էլեքտրաքարշի համար կառուցվող նոր կայարանին մօտիկ, ՍԱԺԷՆԸ 5 ՐՈՒԲ. սկսած։

Հողամասերը տեսնելու համար դիմել պահապան Եգօրին՝ Կուրգանայա և Մագիստրալնայա փողոցների անկիւն։ Պայմանների մասին դիմել Հախվերդօվի խանութը, Արմենակի բաղարում։

ՈՎ ԽՆԱՅՈՒՄ Է ԿՕՊԵԿԸ,
ԿՈՐՑՆՈՒՄ Է ՐՈՒԲԼԻՆԵՐ!!

Մի գրավէք հրապուրիչ էժանութիւններով, որովհետև կորցնում էք ձեր փողերը։

3 ՐՈՒԲԼԻ 90 ԿՈՊԵԿՈՎ

ուղարկում եմ իսկապէս ամուր և գեղեցիկ բրդէ կոտ՝ չէվիոտ «ՎԱՇԻՆԳՏՕՆ», 4½ արշին, ազամարդկանց աշնանային ամրոզի զգեստացու։ Պատը գործված է մօդային մուգ-քառակուսեայ, շերտաւոր կամ թոներ ունեցող նախշերով, սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն կամ ձիթագոյն։ Չէվիոտ «ՎԱՇԻՆԳՏՕՆ» կոտրի ամենալաւ տեսակը՝ 4½ արշ.—4 բուր. 75 կօպէկով։ ԾՐՈՒԲԵԼԸ ԵՒ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԱՀՔԸ ԻՐ ՀԱՇԻՆ։ Ուղարկում եմ պօստով, վերագիր վճ. և ԱՌԱՆՑ ՊԱՆԽԱՎՃԱՐԻ։ Միրքի համար ամեն մի կոտրին աւել հաշվում է 75 կ.։ Ապրանքը եթէ դուր չը գայ՝ փողը վերադարձնում եմ։ Ով պատուիրէ 3 կամ աւելի կոտր՝ կստանայ մի սատանայու ՄՐԱՆԳՈՒՄԱՅՆ ՀՐԻ։

Պահանջները հասցէագրել՝ г. ЛОДЗЬ, № 170.
М. Б. ТОРЧИНСКОМУ. Почт. ящ. 25.
Թղթակցութիւնները ռուսերէն։

(Կ.) (В. 57367) 1009 5—3

ԿՕՄԻՍՍԻՕՆԵՐԱԿԱՆ ՏՈՒՆ
Ա. Բաբաջանեանի
ԲԵՐԼԻՆՈՒՄ

Ընդունվում են յանձնարարութիւններ ամեն տեսակ ապրանքներ գնելու և ծախելու։ Հասցէն՝ Berlin W. 8. Jager Strasse 6.
A. Babadjanian.

(Հ. Կ.) 1035. 8—3

2 զգեստացու 4 բուրլով

Այնպիսի մի էժան գնով, այն է 2 բ., ամբ. մի կոտր՝ 4½ արշ. տղամ. ձմեռային կամ աշնանային զգեստացու «Բէկզդրդ» անունով, որ աչքի է ընկնում իր խիստ ամրութեամբ, գործնականութեամբ և էլեգանտ լինելով, գոյները՝ սև, մուգ-կապոյտ, քառակուսիներով կամ շեղաւոր, ուղարկում եմ այդպիսի 2 կոտրը միայն 4 բուրլով։ Ճանապարհածախքը 70 կ., Սիբիր՝ 1 բ. 35 կ.։ Լաւ տես. կոտրը՝ 2 բ. 85 կ. եւ 3 բ. 25 կ.։ Նոյնպէս ուղ. եմ աշնան. կամ ձմեռ. տղամ. պատրաստի շալվարներ՝ կարված «Տրիկօ-կամդարդ» ամուր կոտրից—1 բ. 80 կ., լաւ տեսակինը՝ 2 բ. 25 կ.։ Ճանապարհածախքը 35 կ.։ Մատանչել ամրոզի երկարութիւնը, նոյնպէս քայլի երկար. եւ գօտու լայնութ.։ Երեք եւ աւելի կոտր բերել տալուց՝ ճանապարհածախքը իմ հաշուին։ Եթէ չը հաւանիք՝ փողը վերադարձնում եմ։ Հասցէագրել՝ А. КИВМАНУ, ЛОДЗЬ. № 43.
Թղթակցութիւնները ռուսերէն։

(Կ.) (В. 55998) 997. 3—3

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է և շուտով լոյս կը տեսնի
Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ և Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏ

Պատմութեան դասագիրքը

Առաջին տարի

(Նախապատմական մարդ եւ հայկական առասպելներ)

ԵՐԲՈՐԴ ԲԱՐԵՓՈԽՎԱԾ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

(Չ. ու. Կ.) 1055. 3—3

ՏՂԱՄԱՐԴԻԿ ՄԻԱՅՆ

տարազով, լաւ և էժան հագնվում են՝ բերել տալով մեզանից պատրաստի զգեստ—պիջակ, շալվար և ժիլետ, իսկապէս լաւ կարված, ատլասէ աստառով, մէկ կամ երկու բօրտով, ամուր և էլեգանտ բրդէ չէվիոտ-տրիկօյից, նորագոյն գործուածք. գոյները՝ սև, շիկագոյն, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն—7 բուբ. 20 կօպէկով։ Ուղարկվում է պօստով, վերագիր վճարով։ Ծրարելու (արկղի մէջ) և ճանապարհածախքի համար աւել հաշվում է 75 կօպ., իսկ Սիբիր՝ կշռի տարբերութեամբ—80 կօպ.։ Չափաբ ցոյց տուէք՝ պիջակի և թեների երկար., կրծքի լայնութ., շալվարի երկար. թէ կողքից և թէ ոտների մէջտեղից։ ԻՐԵՎ ՀՐ ԿՏԱ. որևէ մէկի կողմից եթէ զգեստը չը հաւանիք՝ փողը վերադարձնում եմ։ Հասցէագրէք՝ фирмѣ М. А. БАБУШКИНЪ.
ЛОДЗЬ, 1-ое отд. М.
Թղթակցութիւնները ռուսերէն։

(Կ.) В. 57421) 1011. 2—2

Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ
ԴԱՍԱԳԻՐՔ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Մարդ, կենդանի, բոյս և հանք։

(Դասընթացք հայ ժողովրդական և քաղաքային դպրոցների III, IV և V տարիների)

Երկրորդ տպագրութիւն։ Գինն է 70 կօպ.։ Հարիւր քառասուն բնապատմական նկարներով։ Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ», «Փարոս» գրավաճառանոցներին, կամ հեղինակին՝ ул. Паскевича, № 15.

(Հ. Կ.) 1019. 5—4

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտր. կրթութիւն։

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատենագրեր։

Դասընթացքն ունենում է 3 բաժանմունք։ I բաժ. ընդունվում են գրագէտ անձեր, II-ում՝ քաղաքային կամ 3-դասեան դպրոցաւարտներ, իսկ III-ում—գործնական—հաշուապահ. և առևտր. թուաբան. գիտցողներ։ Իւրաքանչիւր բաժ. դասընթացքը տեւում է 5 ամիս։ Պարապմունքների սկիզբը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ից։ Խնդիրները եւ տեղեկ. ընդունվում են դասարանների գրասենեակում՝ Թիֆլիս, Նարբեժնայա, Վերայի կամուրջի մօտ, սեփ. տ., № 19 կամ Սերգիեվսկայա փող. № 4. Դրասենեակը բաց է ամեն օր՝ առ. ժ. 9—1-ը եւ երեկ. ժ. 5—8-ը։ Տէլէֆոններ—929 եւ 1044.

(Օ. Մ.) 939. 20—12

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Մօսկվայում հրատարակվող

„ԳԱՐՈՒՆ“

Ալմանախների համար

«ԳԱՐՈՒՆԸ» առաջիկայ տարի (հոկտ.—հոկտ.) լոյս կը տեսնի 4 անգամ։

«ԳԱՐՈՒՆԻ» երկու գրքերը կը լինեն զուտ գրական-գեղարուեստական, իսկ միւս երկուսը՝ գիտական-քննադատական։

Գր.-գեղարուեստական գրքի տպագրութիւնը կը սկսվի հոկտեմբերի 1-ից, իսկ գիտ.-քննադատականները՝ նոյեմբերի 1-ից։

ԶՈՐՍ ԳՐՔԻ ԲԱԺԱՆԵԳԻՆՆ Է 4 Ր.

Բաժանորդագրվելու համար դիմում են. Москва, Б. Дмитровка, 9, кв.50, Г. Микаэляну. Թիֆլիս՝ «Գուտտենբերգ», Բագու՝ «Сотрудникъ» գրախանութներին։
Լոյս է տեսել Ա. գիրքը և վաճառվում է բոլոր գրավաճառների մօտ։

(Կ.Հ.) 992. 5—5

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

БАКУ, уголъ Красноводск. и Меркурьевск., телеф. № 10—56.

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատենագրեր։

Կուրսերում ուսանվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն հաստիչի վրա. 2) Հաշուապահութիւն արբիտրաժային, գործարանային, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մասնաւորային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագրութիւն ձեռագրի). 7) Ուսուցումը գրվում մեքենայի վրա։ Աշակերտների համար՝ առանձին վճարով տեսնվում է մասնագիտական։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան 4—7-ը։

Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և ժամանման ծրագիրը (программа) տրվում են՝ Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову.

(Չ.Կ.) 884. 20—13

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Թիֆլիս, Նարբեժնայա, Վերայի կամուրջի մօտ, № 19.

Ի. ՖՕՆ-ԲՐԷՆՆԵՐԻ

Հեղինակ դասագրքի՝ ընդունված լուս. մինիստր. գիտական կոմիտէի եւ Ցիֆնանս. մինիստր. ուսումն. բաժ. կողմից իբրեւ ձեռնարկ եւ դասագիրք բոլոր առեւտր. դպրոցներում։

Դասարանները հիմնված են 1890 թ. և ուսումն. իշխան. տարից ճանաչված են օրինակելի։ Դասարաններն ընդհատում են երկու սեռի անձերին. որոնք ցանկանում են ունենալ հաշուապահի, բոքակցի, գործակցի և այլ պաշտօն, յատկապէս առևտր. գիտութիւններ։

Դասարաններում ուսանվում են հետեւեալ առարկաները. 1) ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹԻՒՆ (կրկնակի, իտալական) եւ այլ տեսակի՝ բանկային, ֆաբրիկային, քաղ. եւ պետական. ինքնավար, գիտուն մենաւաճառ, գործարանային, գեղատնտեսական եւ այլն։ Դասաւանդութիւնը կատարվում է միանգամայն գործնական սէյֆօղով եւ սովորողը առաջին դասից հետո ընտրանում է ինքուրոյնաբար վարել գրքերը։ 2) ԱՌԵՒՏՐ. ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ.—Բանկային, ապրանքային, մուրհակային եւ այլ խնդիրների լուծումներ։ 3) ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ.—Ինքուրոյն կազմումն առևտր. նամակների՝ հանդերձ հաշուապահ, առևտրա-թուաբանական եւ ժամտ. գիտութեամբ։ 4) ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ.—Վատ մակերի՝ հանդերձ հաշուապահ, առևտրա-թուաբանական եւ ժամտ. գիտութեամբ։ 5) ՕՐԷՆՍԴԵՏՈՒԹԻՒՆ.—Ծանօթացումն մուրհակային, ձեռագրի ուղղումն եւ բազմաթիւ առանձին ուսուցումն։ 6) ԴՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԻՆԴՏՕՆՈՎ.—Սովորողներ. գրագիտութիւն. արդիւնաբերական. կրէդիտային եւ այլ կանոնակի։ 7) ՊՐԱԳՐՈՒԹԻՒՆ.—Սովորողները ծանօթանում են տարբեր մեքենաների տեխնիկայի եւ մեխանիզմի հետ։ 8) ԹԻՄԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐՀՇ ՎՐԱ.—Գործողութիւններ համարիչով։ Թուաբան. եւ հանրահաշուական խնդիրներ։ Կրճատ եւ ամբիկ. ձեւեր։ Բոլոր թուաբան. գործող. եւ խնդիրները ամբողջ դասընթացքի ժամանակ լուծվում են համարիչով։

Սովորողների ընդհանուր եւ մասնագիտ. կարգացման համար կայ ԳՐՈՒԱԲԱՆ դասաւանդվող առարկ. վերաբերեալ ամենալաւ դասագրքերով (մօտ 1000 գիրք)։ Գրքերը կարելի է եւ առնել տանել։ Դասարանների դասընթացքն աւարտողները ձրիաբար կարող են օգտվել՝ գործնական հմտութիւն ձեռք բերելու համար՝ Ի. Ֆօն-Բրէնդերի առևտրա-արդիւնաբեր. և տեխն. բիւրօյի գրասենեակում (Սերգիեվսկայա փ., № 4), որ, անպայման, օգտակար կը լինի գործնական տեսակէտից։

Դասարաններն ունեն 3 բաժանմունք։ I բաժ. ընդունվում են գրագէտ անձեր, II-ում՝ քաղաքային կամ 3-դասեան դպրոցաւարտներ, իսկ III-ում—գործնական—հաշուապահ. և առևտր. թուաբան. գիտցողներ։ Իւրաքանչիւր բաժ. դասընթացքը տեւում է 5 ամիս։ Պարապմունքների սկիզբը ՍԵՊՏԵՄԲ. 15-ից։ Խնդիրները եւ տեղեկ. ընդունվում են դասարանների գրասենեակում՝ Թիֆլիս, Նարբեժնայա, Վերայի կամուրջի մօտ, սեփ. տ., № 19 կամ Սերգիեվսկայա փող. № 4. Դրասենեակը բաց է ամեն օր՝ առ. ժ. 9—1-ը եւ երեկ. ժ. 5—8-ը։ Տէլէֆոններ—929 եւ 1044.

(Օ. Մ.) 939. 20—12

Ժողովրդական Լուսաւորութեան Մինիստրութեան իրաւասութեան տակ.
Պետերբուրգի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Գեղարուեստական Ճեմարանի վկայագրով

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ
ԹԻՖԼԻՍՈՒՄ

Саперная № 26.

Երկու սեռի անձերի համար
(Զորրորդ տարեշրջան)

Պարապմունքները սեպտեմբերի 16-ից մայիսի 15-ը ամեն օր՝ երեկ. ժ. 5—7-ը։

Էլեքտրական լուսաւորութիւն։

Աւանդելի առարկաներն են՝ նկարչութիւն, գծագրութիւն, գեղագրութիւն (հայ և օտար լեզուներով), ձեռարուեստ, փորագրութիւն, քանդակագործութիւն, շեղ ձեռագործ, երկրաչափական ձեագիտութիւն, հեռանկար (պերսպեկտիվա), գոյների և ստուերների տեսութիւն։

Աւարտողները ստանում են ատենագրեր։

Կուրսերին կից կայ գեղարուեստական գրադարան։

Տարեկան վճարն է 40 ր.։ Դպրոցականների համար 25 ր.։ Ցանկանալ ցանկացողները թող բարեհաճեն յայտնել այդ մասին կուրսերի հիմնադրին, որից և կարելի է ստանալ աւելի մանրամասն տեղեկութիւններ. անձնական տեսակցութեան համար ամեն օր, առաւ. ժ. 9—11 ը։ Օտար քաղաքներից դիմել՝ Тифлисъ, почт. ящ. 133.

(Ե. ու. Կ.) 1033. 5—5

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Հիմնել ենք առևտրա-յանձնարարական և ներկայացուցչական

ԳՐԱՍԵՆԵԱԿ,

որտեղ ընդունում ենք ընդհանրապէս զանազան առևտրական և առանձնապէս թարմ և չորացրած մրգեղէնի, կոնսերվների և պիւրէների սպառման յանձնարարութիւններ։

Խնդրում ենք դիմումի հետ չը մոռանալ նմուշներ ուղարկել։

Ցարգանօք՝ Զ. Ն. ԽՐԽՐԵԱՆՑ եւ Տ. Զ. ԲԱԽՇԻՆՕՎ

Հասցէներ { С.-Петербургъ, Петербург. ст., Большой пр. 92. Тифлисъ, Елизаветинская, 192.

(Կ.) 973. 15—4

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նուիրատուութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնարանական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձեւով հաշուապահութիւն և ուրիշ մասնագ. առարկաներ 4 ամսվայ ընթացքում։

Կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից ուսանվում են սեպտեմբեր ամսից ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ և սղագրութիւն (стенографія) ըստ ցանկութեան և որոշ վճարով։

Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են 1910 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Դասընթացքն աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատենագրեր։

Դրանից անկախ՝ բացված են քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում ենք դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիս, սամ. Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, Телефонъ № 744.

Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիներին՝ գինն է 3 ր. 50 կ.։ Գինն է բացվածքները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։

(Կ.Հ.Հ.) 930. 0—12

Типогр. изд. „Экономія“ Большая Ванкская № 3.